

11 312

ՀԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՒԼՏ-ՊՐՈՊ ԲԱԺԻՆ.—

# Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ  
ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
Յ Ե Վ Կ Ա Զ Մ Ա Կ Ե Ր Պ Չ Ա Կ Ա Ն  
ՄԵԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1933—34 ուսումնական տարվա համար

3(0.2)

Տ-38

Պ Ե Տ Ն Ր Ա Տ — Ռ Ա Զ Մ Ն Ր Ա Տ Բ Ա Ժ Ի Ն

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 3



11 3/2

ԲԳԿԲ ԲԱՂՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԿՈՒՆՏ ՊԵՐՈՒ ՏՆՈՒՄ 07 MAR 2013 2 5-SEP 2006

3(02) Այ

51 DEC 2009

Ծ-98


Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆՆԵՐԻ  
ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
Յ Ե Վ Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ջ Ա Կ Ա Ն  
ՍԵԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1006  
28085  
2673

1933—34 ուսումնական տարիա համար

Պ Ե Տ Ր Ա Տ — Ռ Ա Ջ Մ Ր Ա Տ Բ Ա Թ Ի Ն  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1933





ԿԱԶՄԱԿԵՐՊՉ ԿԱՆՄԵԹՈՂԱՍ ԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ  
ԲԳԿԲ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԲՆԵՐ ԱՆՑԿԱՑ-  
ՆԵԼՈՒ ԳԱՄԱՐ 1933-34 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

1. ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՏԱԿՍԱՆ ԿԱՐԳԸ

1. Քաղաքական պարտագծումներին ծրագիրը նկատի ունի մշակելու այն՝ կարմիր բանակայինների ու ժամկետավոր ծառայության կրտսեր պետկազմի հետ 2-տարվա ընթացքում:
2. Ընթացիկ ուսումնական տարում, ա) ծառայության առաջին տարվա կարմիր բանակայինների ու վարժական ստորաբաժանումների կուրսանտների հետ պետք է անցնել ծրագրի 1-ին, 2-րդ, 3-րդ ու 4-րդ հատվածները բ) 2-րդ տարվա ծառայության ու ժամկետավոր ծառայության կրտսեր պետկազմի հետ՝ ծրագրի 3-րդ, 5-րդ և 7-րդ հատվածները (վարժական պլաններ 1 և 2):
3. Միամյակ-կուրսանտների հետ մշակվում է կուսակցության պատմությունը ԲԳԿԲ Քաղվարչության կուրս-պրոպլի՝ կարմիր բանակի ուղղմական զպրոցների ծրագրով (վարժական պլան 3):
4. Գերակետիկ ծառայության կրտսեր հրամա-

Պատ. խմբ. Մ. Դավթյան, Թարգմ. Գրաբխո,  
Տեխ. խմբ. Գ. Չենյան, Սրբա. ընչ Վ. Տերո-  
յան, պատվեր № 2319 Գլ. 8353, Հրատ. 2778,  
Տըլեւժ 1000. Պետհրատը Տպարան  
Յերեւան 1933 թ.



տարները պարագում են. ա) վոչ- բավականաչափ սրատրաստվածները ընդհանուր վաշտային խմբակներում ժամկետավոր ծառայության պետկազմի հետ միասին. բ) Ավելի պատրաստվածները հատուկ գնդային խմբակներում, վորտեղ մշակվում է կուսակցության պատմության գասրնթացը ԲԳԿԲ Քաղվարչության կուլտ-պրոպլե' ԲԳԿԲ ուղղակի գալրոցների համար ծրագրով (վարժական պլան 3-րդ): Համապատասխան ձեվով լուծվում է պատարագումներին ծրագրի հարցը հրաձիգ-ամբաձիգների, ուղիստների և ավիամասերի, ավիոմոտորիստների հետ:

5. Ծովային ուժերում պարագումներին կարգը հայտարարվում է առանձին:

6. Ծրագրերի ամենահիմնական մշակման հետ միասին քաղաքապարագումներում բոլոր կարմիր բանակայիններին, կուրսանտների ու կրտսեր հրամատարների հետ մշակվում են կարեվորագույն ընթացիկ քաղաքական թեմաները. կուսակցության համագումարների վորոշումները, կենտկոմի պլենումների և կուսակցության ու կառավարության այլ հիմնական վորոշումները, միջազգային քաղաքականության կարեվորագույն հարցերը: Այդ նպատակով բոլոր վարժական պլաններում նախատեսված է 36 վարժական ժամի հատուկ ռեզերվ: Ընդ սմին ի վորիորումն նախկին կարգի ընթացիկ քաղաքականության այն թեմաները, վոր յենթակա յեն քաղաքապարագումներում պարտադիր մշակման, սահմանվում են ամբողջ տարվա ընթացքում ամեն անգամ ԲԳԿԲ Քաղվարչության հատուկ ցուցումով:

Արգելվում է լրացնել քաղաքապարագումներին ծրագրերը վորեմե այլ թեմաներով, վոր նախատեսված չեն ԲԳԿԲ Քաղվարչության ցուցումներով, ինչպես նաև ուղտագործել առանց այդ ցուցումների վարժական ժամերի ռեզերվը: Ընթացիկ քաղաքականության բոլոր այն հարցերի հետ, վորոնց մշակման կարգի վերաբերյալ չեն լինի ԲԳԿԲ Քաղվարչության հատուկ ցուցումներ, կարմիր բանակայինները պետք է ծանոթանան մասսայական ագիտացիայի գանազան ձեվերի միջոցով (քաղինֆորմացիա, պրոպյաներ, ժողովներ և այն): Միևնույն ժամանակ միանգամ ևս հաստատվում են բոլոր նախկին ցուցումները քաղաքապարագումներին ակտուալ ու հրատապ վարձներու մասին: Սմբակավարները պետք է պարզարանեն բոլոր տեսակ հարցերը, վոչ թե վերացական ձեվով, այլ անխզելիորեն կապելով ընթացիկ քաղաքական կյանքի հետ և կուսակցության առաջադրած մարտական խնդիրների հետ:

7. Ազգային շրջաններում ու բանակներում թույլատրվում է ռեզերվից 10 վարժական ժամ ուղտագործել՝ մշակելու համար կարմիր բանակայինների հետ ազգային հանրապետությունների հեղափոխական պայքարի պատմության ու սոցիալիստական շինարարության կարեվորագույն հարցերը: Այդ ռեզերվն ուղտագործվում է միայն շրջանների (բանակների) Քաղվարչությունների հատուկ ցուցումներով:

8. Բոլոր ծրագրերը պետք է սկսեն անցնել ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ից և լիովին մշակվեն մինչև 1934 թ. ոգոստոսի 15-ը: Կտրականապես ար-



գելվում է առանց ԲԳԿԻ Քաղվարչության Հատուկ  
Թույլտվության կրճատել ծրագրներն ու վարժական  
պլանները:

## II. ԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՒ ՆՄԱՆՑ Ո՞ՐՆԱԿԱՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔԸ

9. Կարմիր բանակայինների հետ քաղաքական  
պարապմունքների խմբակավարներ ընտրելիս, վո-  
րոնք, վորպես կանոն, նշանակվում են դասակի հրա-  
մատարից, զորամասերի կոմիտաները (քաղմասի  
ոգնականները) պետք է ղեկավարվեն հետևյալով.  
ա) այն խմբակավարները, վորոնց խմբակները քաղ-  
պարապմունքների աշխան տեսչական ստուգումների  
ժամանակ ստացել են «անբավարար» գնահատական,  
ընթացիկ ուսումնական սարում չեն թույլատրվում  
ղեկավարելու քաղպարապմունքները, վորպես  
վստահությունը չարզարայրած և իրենց վրա դրած  
պարտականությունները կատարել չկարողացած  
անձնավորությունները (կոմիտարը (քաղմասի ու-  
նականը) և գնդի պրոպագանդի հրահանգիչը խնամ-  
քով անհատապես ստուգում են այն հրամատարների  
քաղաքական պատրաստությունը, վորոնց յենթա-  
դրվում են այս տարի ներգրավել աշխատանքի, վոր-  
պես խմբակավարներ, բայց վորոնք նախընթաց ու-  
սումնական տարում ավյալ զորամասում քաղ-  
պարապմունքներ չեն անցկացրել:

10. Ժամկետավոր ծառայության կրտսեր հրա-  
մատարների հետ պարապմունքներն անձամբ անց են

կացնում համապատասխան վաշտերի (մարտկոցնե-  
րի, եսկադրոնների և այլն) քաղղեկները (քաղմասի  
ոգնականները):

11. Գերակետիկ կրտսեր հրամատարների հետ,  
վորոնք համախմբվում են գնդային խմբակի մեջ,  
պարապմունքներն անց է կացնում գնդի պրոպա-  
գանդի հրահանգիչը, իսկ յեթե այդպիսին չկա՝  
բարձր վորակի խմբակավար, վորին նշանակում է  
գիվիդիայի (բրիգադի) քաղբաժինը:

Ծանոթություն. — Այն մոտո-մեխամսերում,  
վորտեղ կան գերակետիկ ծառայության մեծ  
թվով կրտսեր հրամատարներ, նրանց խմբակ-  
ները կազմակերպվում են զորամասի ստորաբա-  
ժանման մասշտաբով, և խմբակը ղեկավա-  
րում է քաղղեկը: Այս դեպքում, ժամկետավոր  
ծառայության կրտսեր հրամատարների հետ  
պարապմունքն անց է կացնում միջին պետկազ-  
մի անձերից մեկը՝ զորամասի կոմիտարի (քաղ-  
մասի ոգնականի) նշանակումով:

12. Միամյակ-կուրսանտների հետ պարապ-  
մուտքն անց են կացնում քաղղեկը և անհրաժեշտու-  
թյան դեպքում՝ այն ղեկավարները, վորոնց նշանա-  
կում է գիվիդիայի (բրիգադի քաղբաժինը):

13. Քաղպարապմունքների յուրաքանչյուր  
խմբակում զորամասի կոմիտարը (քաղմասի ոգնա-  
կանը) խմբակավարին ոգնելու համար նշանակում  
է ոգնական, վորը ներկա յե լինում բոլոր քաղպա-  
րապմունքներում, աշխատում է խմբակավարի ցու-  
ցումով և խմբակավարի հետ միասին պատասխա-  
նատվություն է կրում խմբակի քաղաքական պատ-



բաստութեան համար: Վորպէս խմբակաւարներէ ոգնականներ նշանակվում են. ա) կարմիր բանակա-  
յինների ու գնդային գաղտոցների ուսանողների.  
խմբակներում միջին պետկազմից, գերակետիկ ծա-  
ռայութեան կրտսեր հրամատարներից. բ) ժամկե-  
տային ծառայութեան կրտսեր պետկազմի խմբակնե-  
րում՝ միջին պետկազմից և, վերջին բացառութեամբ յուն  
գերակետիկ կրտսեր հրամատարներից ամենից պատ-  
րաստվածներէից. գ) գերակետիկ ծառայութեան  
կրտսեր պետկամի և միամյակ-կուրսանտների  
խմբակներում ամենից պատրաստված քաղաչխա-  
տողներից ու հրամատարներից:

14. Չորամասի կոմիսարը (քաղմասի ոգնակա-  
նը) և պրոպագանդի հրահանգիչը, ուսումնական  
տարվա սկզբից պռաջ ստուգում են անհատապէս  
բոլոր այն հրամատարներին քաղաքական պատրաս-  
տութեամբ, վորոնց յենթադրում են նշանակել  
քաղխմբակաւարների ոգնականներ:

15. Խմբակաւարների ու նրանց ոգնականնե-  
րի ամբողջ կազմը պետք է ընտրված լինի և այդ մա-  
սին տրված լինի զորամասի հրամանով վոչ ուշ, քան  
ընթացիկ տարվա նոյեմբերի 10-ը:

### III. ԲԱՂԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԵՐՈՂԻԿԱՆ

16. Վորպէս հիմնական ձեռնարկներ հաստատ-  
վում են հետևյալ դասազրբերը. ա) քաղպարապ-  
մունքների ծրագրից-Մ. Սուրոցկի և Վ. Բերլին.  
կարմիր բանակային քաղպարապմունք և բ) կուսակ-  
ցութեան պատմութեանից-  
[redacted]

Քաղմարմիններն ու կոմիսարները (քաղմասի  
ոգնականները) պետք է ներշնչեն խմբակաւարներին  
ու կարմիր բանակայիններին, վոր դասազրբը  
տրված է վոչ թե նրա համար, վոր այդ կարդան ա-  
զատ ժամերին, այլ նրա համար, վորպէսզի խմբա-  
կաւարն այդ դասազրբով սովորեցնի, իսկ կարմիր  
բանակայինները սովորեն: Քաղմարմիններն ու կո-  
միսարները (քաղմասի ոգնականները) պետք է պար-  
զաբանեն, վոր դասազրբը հանդիսանում է հիմնա-  
կան ու պարտադիր ձեռնարկ, վոր կարմիր բանա-  
կայինները (կուրսանտներն ու կրտսեր հրամատար-  
ները) պարտավոր են ուսումնական տարվա ընթաց-  
քում լիովին մշակել համապատասխան դասազրբը  
և հիմնովին յուրացրել այն, վոր առանց դրան խոսք  
անդամ լինել չի կարող պարապմունքների ծրագրի  
բաւարար յուրացման մասին:

17. Քաղաքական ուսուցման վորակի բարձրաց-  
ման և գոտակարդքերի լավագույն մշակման նպա-  
պատակով, յերեկոյան քաղպարապմունքների ինք-  
նապատրաստումը վերցվում է, և կրտսեր հրամա-  
տարները ազատվում են ինքնապատրաստութեան  
անցկացնելուց: Քաղպարապմունքներն ու վեր-  
լուծումը կատարվում է վարժական ժամերին ան-  
միջոպէս քաղպարապմունքներում:

18. Դրա հետևանքով սահմանվում է քաղպար-  
ապմունքների յուրաքանչյուր թեմայի մշակման  
հետևյալ կարգը.

ա) թեմայի մշակմանը հատկացվում է 8-10  
ժամ (4-5 քաղպարապմունք) համաձայն վարժա-  
կան պլանի:



բ) առաջին քաղաքապետներում խմբակալա-  
րը մանրամասնորեն բացատրում է կարմիր բանա-  
կայիններին (կուրսանտներին) հերթական թեմա-  
յի բովանդակութունը, և հավաստիանալով, վոր  
կարմիր բանակայինները (կուրսանտները) հաս-  
կացել ու յուրացրել են նրա բացատրութունները,  
գաս և տալիս դասազրքով (ընթացիկ քաղաքակա-  
նության թեմաների համար՝ թերթերից) :

դ) հաջորդ 2-3 քաղաքապետները ընթաց-  
քում կարմիր բանակայինները (կուրսանտները)  
խմբակալարի ու նրա ողնականի ղեկավարու-  
թյամբ խնամքով կատարում են դասը, մշակելով  
համապատասխան գրույցները դասազրքով և միա-  
ժամանակ կատարելով անհրաժեշտ գրանցումները :

դ) վերջին քաղաքապետներում խմբակալարը  
ստուգում է, թե ինչ չափով են կարմիր բանակա-  
յինները յուրացրել դասը :

19. Տրված դասի կատարումը խմբակում կազ-  
մակերպվում է հետևյալ հիմունքներով .

ա) գրադետ, ամենից պատրաստված, կարմիր  
բանակայինները (կուրսանտները), վորոնք ստա-  
ցել են «լավ» և «գերազանց» գնահատականներ,  
կատարում են դասը (կարդում և ուսումնասիրում  
են դասազրքը և անում են գրանցումներ) ինքնու-  
րույն կերպով խմբակալարի հսկողությամբ, ղի-  
մելով խմբակալարին, անհրաժեշտության ղեկ-  
քում հարցեր տալով և բացատրություններ ստա-  
նալով :

բ) Այն կարմիր բանակայինների (կուրսանտ-  
ների) հետ, վորոնք յետ են մնում, թույլ են յու-

րացնում, քաղաքապետները դասազրքի ըն-  
թերցումն ու մշակումն անց է կացնում խմբակա-  
վարը (կամ նրա ողնականը) : Անհրաժեշտության  
ղեկքում կարմիր բանակայինների հետ տարվում է  
դասազրքի լրացուցիչ ընթերցումն յերեկոյան ժա-  
մերին :

գ) Մնացած կարմիր բանակայինների (կուր-  
սանտների) հետ դասազրքի ընթերցումն անց է  
կացնում խմբակալարի ողնականը (կամ խմբա-  
կալարը, յեթե նրա ողնականը զբաղված է յետ  
մնացողների հետ) :

20. Պարապետները կարգը ժամկետավոր ու  
ղերակետիկ ծառայության կրտսեր պետկազմի  
խմբակներում (և միամյակների խմբակներում)  
հիմնականը նույն է, ինչ կարմիր բանակայինների  
հետ : Տրված դասի կատարումը կազմակերպվում է  
հետևյալ ձևով . ա) այն կրտսեր հրամատարների  
հետ, վորոնք տակավին բավականչափ պատրաստ-  
ված չեն, վորպեսզի ինքնուրյուն կարգան դասա-  
զրքը, ընթերցումն անց է կացնում խմբակալարի  
ողնականը . մնացած կրտսեր հրամատարները և  
միամյակ- կուրսանտները դասը պատրաստում են  
ինքնուրույն՝ խմբակալարի ու նրա ողնականի  
հսկողությամբ :

IV. ՀԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ  
ԱՏՈՒԳՈՒՄԸ

21. Սահմանվում է հառաջադիմության հետև-  
յալ չորս գնահատականը . «անբավարար», «բավա-  
րար», «լավ» ու «գերազանց» :



22 Խմբակավարները անուամ են իրենց խմբակի վարժական մատյանը (մատյանի ձևը կցվում է) գրանցելով նրա մեջ ըստ պարագմունքների ընթացքի մշակվող թեմաներից առանձին կարմիր բանակայինների հառաջադիմության գնահատականը:

23. Վոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ, խմբակավարը հավաքում է բոլոր կարմիր բանակայինների տետրերը, քննում է գրանցումները, անտրերում գնում է գրանցումների գնահատականը և այդ գնահատականը մտցնում է վարժական մատյանի մեջ:

24. Ծրագրի յուրաքանչյուր հատվածի մշակումից հետո քաղղեկն անց է կացնում իր ստորաբաժանման կարմիր բանակայինների հառաջադիմության անհատական ստուգումը, գրանցելով ստուգման արդյունքները համապատասխան խմբակների վարժական մատյանների մեջ: Ստուգման արդյունքների հիման վրա քաղղեկը կոնկրետ մատնանշում է խմբակավարներին, թե ինչ փոփոխություններ պետք է մտցնել խմբակում աշխատանքի կազմակերպման մեջ, ինչպես պետք է աշխատել առանձին կարմիր բանակայինների հետ (այն կարմիր բանակայիններից, վորոնց թույլատրված է ինքնուրույն պատրաստել դասերը, ովքեր են կարողանում այդ անել և ովքեր չեն կարողանում և հետադաշում պետք է պատրաստել տալ դասերը դեկավարի հետ, ում պետք է կցել յետ մնացողներին և ով է արդեն դադարել յետ մնալուց և այլն):

25. Զորամասի կոմիսարները (քաղմասի ուղ-

նակոնները) և պրոպագանդի հրահանգիչները պարտավոր են պարբերաբար ստուգել կարմիր բանակայինների կուրսանտների ու կրտսեր հրամատարների հառաջադիմությունը ստորաբաժանումներում, վորպեսզի վարժական տարվա ընթացքում կարմիր բանակայինների յուրաքանչյուր խմբակ ստուգված լինի ամենապակասը մեկ անգամ, իսկ կուրսանտների կրտսեր հրամատարների ու միամյակների յուրաքանչյուր խմբակ ամենապակասը յերկու անգամ:

26. Ուսումնական տարվա վերջում (ոգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը), պարագմունքների ծրագրերն ավարտելուց հետո, բոլոր զորամասերում անց են կացվում կարմիր բանակայինների (կուրսանտների) ու կրտսեր հրամատարների քաղաքական դիտելիքների տարեկան ստուգում: Կարմիր բանակայինների, վարժական ստորաբաժանումների կուրսանտների և ժամկետավոր ծառայության կրտսեր հրամատարների ստուգումները կատարում են այն հանձնաժողովները, վորոնց նշանակում է գնդի (դումարտակի) կոմիսարը (քաղմասի ոգնականը). միամյակ կուրսանտների և գերակետիկ ծառայության կրտսեր հրամատարների ստուգումները, վորոնք պարագում են գնդային խմբակներում, ստուգումն անց են կացնում այն հանձնաժողովները, վորոնց նշանակում է դիվիզիայի քաղրամինը՝ խմբակների ղեկավարների մատակցությամբ: Հանձնաժողովներն անց են կացնում բոլոր կարմիր բանակայինների կուրսանտների ու կրտսեր հրամատարների անհատական բանավոր ու



զբաժնոր ստուգումներ: Այն կարմիր բանակայինները, կուրսանտներն ու կրտսեր հրամատարները, վորոնք ստացել են ստուգման ժամանակ «գերազանց» գնահատական պարգևատրվում են հավասանազրեքով (գովասանազրեքի բյանկները սլատրատում և ուղարկում և ԲԳԿԲ Քաղվարչությունը):

Տարեկան ստուգումներն անցկացնելու կարգի մասին մանրամասն հրահանգը կհաստատարվի Լրացուցիչ կերպով:

27. Դվիզիոնական (բրիգադային) և շրջանային (բանակային) քաղպարապմունքների տեսչական ստուգումներն ի փոփոխումն նախկին կարգի կառավրվում են տարեկան մի անգամ (ուղոստոսից-սեպտեմբերին) համաձայն հատուկ կանոնադրության:

### V. ԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ՈՐԿԱՎԱՆՆԵՐԻ ՊՈՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

28. Հրահանգչական պարապմունքներ անցկացնելու համար գործառնի բոլոր խմբակավարներն ու նրանց ողնականները բաժանվում են 2 խմբակի. 1) քաղցկեններ, այն խմբակավարներն ու նրանց ողնականները, վորոնք պարապմունքներ են անում 2-րդ տարվա ծառայության կարմիր բանակայինների ու ժամկետավոր ծառայության կրտսեր պեդհադմի հետ. 2) այն խմբակավարներն ու նրանց ողնականները, վորոնք պարապմունքներ են տանում առաջին տարվա ծառայության կարմիր բա-

նակայինների և վարժական ստորաբաժանումների կուրսանտների հետ: Խմբակավարների ու նրանց ողնականների հետ պարապմունքներ տանում են գործառնի կոմիսարները (քաղմասի ողնական-ները) և պրոպագանդի հրահանգիչը գեկագում մի անգամ հարակից տրվող 4-րդ վարժական պլանով:

29. Մահմանվում և խմբակավարների ու նրանց ողնականների հետ պարապմունքների հետեյալ կարգը.

ա) Յուրաքանչյուր թեմա մշակվում է մի ամսվա ընթացքում (8 դասարանային ժամ՝ 3 պարապմունք).

բ) Առաջին պարապմունքում (2 ժամ) գեկավարը մանրամասնորեն մեկնաբանում է թեմայի բովանդակությունը և խմբակավարներին տալիս և դաս (համաձայն քաղպարապմունքների ծրագրում մատնանշած գրականության ցուցակի):

գ) Հաջորդ պարապմունքում (3 ժամ) անց և կացվում խմբակային զրույց թեմայի շուրջը. վերջում գեկավարը, 1) ամփոփում է թեմայի մշակված ան արդյունքներն ըստ եյության, լուսաբանում է վոչ բաժականաչափ պարզ հարցերը և այլն. 2) ցույց է տալիս, թե ինչ հարցեր են յուրացվել վոչ բավարար ձևով և կոնկրետ ցուցումներ և տալիս առանձին խմբակներին այն մասին, թե ինչ պետք է լրացուցիչ կերպով նրանք մշակեն. 3) տալիս է մեկ թողական ցուցումներ կարմիր բանակայինների հետ համապատասխան թեմաների մշակման կարգի մասին:

դ) Այն ժամանակը, վոր հատկացված է 3-րդ



պարապմունքի համար (3 ժամ), ղեկավարն ող-  
տագործում է անհատական քննություններ (զաչոտ  
ներ) ընդունելու համար բոլոր խմբակավարներից  
ու նրանց ողնականներից մշակված թեմայի վերա-  
բերյալ: Այն խմբակավարին, վորը քննական ստու-  
գումը չի կարողացել տալ, չի թույլատրվում կար-  
միր բանակայինների հետ պարապմունքն անցկաց-  
նելու:

յե) Պարապմունքների ղեկավարը վարում է  
վարժական մատյան, վորտեղ մացնում է խմբա-  
կավարների և նրանց ողնականների հառաջադիմու-  
թյան զնահատականք:

30. Սմբակավարների համար հիմնական ձեռ-  
նարկներ են հանդիսանում հետևյալ դասազրբերը.  
1. [redacted]

2-Մոնտաժ. Սկևարկ  
հեղափոխական շարժման պատմությունից. 3. Ս.  
Ռարինովիչ. Քաղաքացիական պատերազմի պատ-  
մությունը, 4. Լ. Սեգալ. Քաղսնուեսության հա-  
մառու դասընթաց և 5. Ն. Բերեզին. Տնտեսական  
Քաղաքականությունը: Այս դասազրբերի հիմնական  
մշակման հետ միասին խմբակավարները պետք է  
աշխատեն նախաաղբյուրներով. Վ. Ի. Լենինի՝  
բնօրի յերկերից (6 հատորյակով) և Ի. Ստալինի՝  
Լենինիզմի եարցեր (զբաղանության այն ցուցակի  
սահմաններում, վորը մատնանշված է քաղաքա-  
րապմունքների ծրագրում: Քաղաքարապմունքների  
յուրաքանչյուր թեմայի առթիվ ԲԿԻ՝ Քաղվար-  
չության Կուրս-պրոպը հրատարակում է մեթո-  
դական մշակումներ):


31. Այն բոլոր հրամատարները, վորոնք կա-  
տարում են խմբակավարների ու նրանց ողնականնե-  
րի պարապմունքյուններ, աղատվում են. ա) մի-  
ջին հրամակազմը՝ մարքս-լենինյան պատրաստության  
պարտադիր պարապմունքներից և բ) կրտսեր պետ-  
կազմը՝ կրտսեր պետկազմի քաղաքարապմունքնե-  
րից: Քաղգեկները պետկազմի մարքս-լենինյան  
պատրաստության պարապմունքների չեն աղտո-  
վում:

32. Գատուկների ոչն հրամատարները, վորոնց  
չի թույլատրված ղեկավարելու քաղաքարապմունք-  
ներ, համարվում են հատուկ խմբակի, վորը պա-  
րապում է խմբակավարների հետ պարապմունքնե-  
րի ծրագրով, բայց հատուկ 5-րդ վարժական պլա-  
նով: Ուսումնական տարվա վերջում զորամասի կո-  
միսարը (քաղմասի ողնականը) ստուգում է այդ  
հրամատարներին, վորից հետո վստայում է, թե  
կարելի՞ չէ արդյոք թույլ տալ նրանց հետագայում  
չարդարապմունքներ անցկացնել:

33. Պարապմունքները խմբակավարների հետ  
պետք է սկսվեն վոչ ուշ, քան րնթացիկ տարվա  
նոյեմբերի 10-ը այնպես, վոր մինչև դեկտեմբերի  
1-ը խմբակավարները լիովին անցնեն ստաճին թե-  
ման:

34. Նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 1-ը  
(րնթացիկ տարվա) անց են կացվում դիվիզիական  
(կայազորային) խմբակավարների ու նրանց ողնա-  
կանների յերկորյա հավաքներ: Սմբակավարները  
հավաքներում պետք է հիմնովին ծանոթանան

2673  
1006  
28085





սույն կադմակերպչական -մեթոդական ցուցումներ-  
 րի հետ: Հալաքներում առանձնապես խնամքով  
 պետք է մշակվի քաղաքապետներին մեթոդի-  
 կան՝ յերեկոյան ինքնապատրաստութեան վերաց-  
 ման սանջութեամբ:

Հետագայում առաջին քաղաքապետներն-  
 րում զորամասերի կոմիսարներն ու քաղաքները  
 պետք է անձամբ ցույց տան խմբակավարներին ու  
 նրանց ղեկավարներին, թե ինչպես պետք է կադ-  
 մակերպել դասի կատարումը կարմիր բանակային-  
 ների հետ (դասադրքի ընթերցումն ու մշակումը և՛  
 գրանցումները):

ԲԳԿԲ քաղվարչութեան կուլտ-պրոպ բաժնի  
 պետ՝ ԽԱՐԻՏՈՆՈՎ, 7 սեպտեմբերի 1933 թ.

ՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՆ 1-ԻՆ

Քաղաքապետներին համար — 1-ին տարվա ծառայութեան  
 կարմիր բանակայինների ու վարժական ստորաբաժանումնե-  
 րի կուրսանտների հետ

№№	ԹԵՄԱՅԻ ԱՆՈՒՆԸ	Ժամերի
		քիվը
ըստ կարգի		8
1.	Ինչպես ծնունդ առավ կարմիր բանակը . . . . .	8
2.	Ինչպես կարմիր բանակը հաղթեց սպիտակ զվար- ղիականներին և խոտրվեցաներին . . . . .	8
3.	Կարմիր բանակը բանվորական պետութեան բանակ է . . . . .	8
4.	Կարմիր բանակի կազմակերպումը . . . . .	8
5.	Տեխնիկան կարմիր բանակում . . . . .	8
6.	Կապիտալիզմը հարստահարման ու շահագործման իրավակարգն է . . . . .	8
7.	Կապիտալիզմի կործանման անխուսափելիութունը . . . . .	6
8.	Կոմունիզմ ու սոցիալիզմ . . . . .	6
9.	Բանվոր դասակարգն աշխատավորներին առաջնորդն է . . . . .	8
10.	Պրոլետարիատի դիկտատուրան . . . . .	8
11.	Խորհրդային պետութեանը պրոլետարական դիկ- տատուրայի պետութեանն է . . . . .	8
12.	Համկոմկուսը բանվոր դասակարգին առաջնորդն է . . . . .	8
13.	Մարք-Նիդելս-Լենին-Ստալին . . . . .	8



14. Ինչպես բանվորներն ու գյուղացիներն սկսեցին կազմակերպվել հեղափոխական պայքարի համար . . . . .	8
15. Ինչպես բանվորներն ու գյուղացիները պայքարեցին 1905 թվին . . . . .	8
16. Ինչպես բանվորներն ու գյուղացիները տապալեցին ցարին . . . . .	6
17. Ինչպես բանվորները նվաճեցին իշխանութիւնը Հոկտեմբերին . . . . .	8
18. Ինչպես բանվորներն ու աշխատավորները վերահանդեսեցին ժողովրդական տնտեսութիւնը . . . . .	8
19. Ինչպես կուսակցութիւնն ու խորհրդային պետութիւնն անցկացրին ժողովրդական տնտեսութեան վերակառուցումը . . . . .	6
20. Առաջին հնգամյակի արդյունքները . . . . .	8
21. Յերկրորդ հնգամյակի խնդիրները . . . . .	8

160

Ռեզերվ ընթացիկ քաղաքականութեան թեմաների համար . . . . . 36

Ռեզերվ թույլ յուրացված թեմաների կրկնողութեան համար . . . . . 14

Ընդամենը . . . . . 210

Քաղաքապետութեան համար—2-րդ տարվա ծառայութեան կարմիր բանակայիներին ու ժամկետավոր ծառայութեան կրտսեր պետկազմի հետ

Ձև	ԹԵՄԱՅԻ ԱՆՈՒՆԸ	Ժամերի
ըստ կարգի		Բիվը
1. Ինչպես բանվորներն ու գյուղացիներն սկսեցին կազմակերպվել հեղափոխական պայքարի համար . . . . .		8
2. Ինչպես բանվորներն ու գյուղացիները պայքարեցին 1905 թվին . . . . .		8
3. Ինչպես բանվորներն ու գյուղացիները տապալեցին ցարին . . . . .		6
4. Ինչպես բանվորները նվաճեցին իշխանութիւնը Հոկտեմբերին . . . . .		8
5. Սոցիալիստական արդյունաբերութիւնը յերկրորդ հնգամյակում . . . . .		8
6. Ընդ. Ստալինի վեց պայմանները . . . . .		6
7. Գյուղատնտեսութիւնը յերկրորդ հնգամյակում . . . . .		8
8. Պայքարը բերքատուութեան համար . . . . .		8
9. Կոլտնտեսային արտադրութեան խնդիրներն ու կազմակերպումը . . . . .		10
10. ՄՏԿ ու խորհրդատնտեսութիւններ . . . . .		8
11. Ինչպես առաջացավ Կոմինտերնը . . . . .		8
12. Հետպատերազմյան կապիտալիզմը . . . . .		10
13. Աշխատավորների հեղափոխական պայքարը կապիտալի յերկրներում . . . . .		12
14. Աշխատավորների հեղափոխական պայքարը դադարեցրած . . . . .		8



15. Նոր իմպերիալիստական պատերազմների պատրաստութունը . . . . .	10
16. ԽՍՀՄ կապիտալիստական շրջապատման մեջ . . . . .	10
17. Կոմինտերնի պայքարը պատերազմների ու ինտերվենցիայի դեմ . . . . .	8

144

Ռեզերվ ընթացիկ քաղաքականության թեմաների համար . . . . .	36
Ռեզերվ թույլ յուրացված թեմաների կրկնողության համար . . . . .	20

Ընդամենը . . . . . 200

ՎԱՐԺԱԿԱՆ ՊԼԱՆ 3-ՐԴ

Քաղաքապետությունների համար միամյակ — կուրսանտների և գերակետիկ ծառայության կրտսեր հրամառարների հետ

1. Համկոմկուսի պատմությունը . . . . .	170
2. Ընթացիկ քաղաքականություն . . . . .	36

Ընդամենը . . . . . 206

ՎԱՐԺԱԿԱՆ ՊԼԱՆ 4-ՐԴ

Խմբակավարների հետ հրահանգչական պարապմունքների համար

ա) Այն խմբակավարների հետ, Նորոնք պարապմունքներ են տանում ծառայության առաջին տարվա կարմիր բանակայինների և վարժական ստորաբաժանումների կուրսանտներին հետ:

Քաղաքապետությունների թեմաների խմբակավարների հետ	Հրահանգչական պարապմունքների թեմաները խմբակավարների հետ	Պարապմունքներ	Մուտք	Ժամեր թիվը
1. Ինչպես ծնունդ առավ կարմիր բանակը	1. Կարմիր բանակի ու քաղաքացիական պատերազմի պատմության հիմնական հտապները	3	8	
2. Ինչպես կարմիր բանակը հաղթեց սպիտակ գվարդիականներին և ինտերվենտներին	2. Կարմիր բանակի կազմավորումն ու նրա խոզերները	3	8	
3. Կարմիր բանակը բանորական պետության բանակն է	3. Մարքս-Լենին-Ստալինի ուսմունքի հիմունքները կապիտալիզմի, նրա դարպասման ու անխուսափելի կործանման մասին:	3	8	
4. Կարմիր բանակի կազմակերպությունը				
5. Տեխնիկական կարմիր բանակում:				
6. Կապիտալիզմը հարստահարության ու շահագործման իրավահարգ է:				
7. Կապիտալիզմի կործանման անխուսափելիությունը:				



9. Բանվոր դասակարգը աշխատավորների առաջնորդն է:	4. Մարքս Լենին-Ստալինի ուսմունքի հիմունքները պետութեան ու պրոլետարիատի զիկտատուրայի մասին:	3	8
10. Պրոլետարիատի զիկտատուրա:			
11. Մորհրդալին պետութունը պրոլետարական զիկտատուրայի պետութունն է:			
12. Համկոմկուսը բանվոր դասակարգի առաջնորդն է:	5. Համկոմկուսը բանվոր դասակարգի առաջնորդն է:	3	8
13. Մարքս, Ենգելս Լենին, Ստալին:			
14. Ինչպես բանվորներն ու գյուղացիներն սկսեցին կազմակերպվել հեղափոխական պայքարի համար:	6. Բուլեիկյան կուսակցութեան հիմնադրումն ու 1905 թվի հեղափոխութունը:	3	8
15. Ինչպես բանվորներն ու գյուղացիները պայքարեցին 1905 թ.:			

16. Ինչպես բանվորներն ու գյուղացիները տապալեցին ցարին:	7. Փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխութունները:	3	8
17. Ինչպես բանվորները նվաճեցին իշխանութունը հոկտեմբերին:			
18. Ինչպես բանվորներն ու աշխատավորները վերականգնեցին ժողովուրդական տնտեսութունը:	8. Սոցիալիստական շինարարութեան լենինյան պլանն ու նրա իրագործումը:	3	8
19. Ինչպես կուսակցութունն ու խորհրդալին պետութունն անցկացրին ժողովուրդական տնտեսութեան սոցիալիստական վերակերտումը:			
20. Առաջին հնգամյակի արդյունքները:	9. Առաջին հնգամյակի արդյունքները և լերկրորդ հնգամյակի խընդիրները:	3	8
21. Յերկրորդ հնգամյակի խնդիրները:			
	Ընդամենը	27	72
Ռեզերվ	Ընթացիկ քաղաքականութեան խեմացի մշակման համար	—	8
	Ընդամենը	—	80



բ) Չ-րդ տարվա ծառայութեան կարմիր բանակային-  
ների ու ժամկետավոր ծառայութեան պետկազմի հետ պա-  
րագմունքներ տանող խմբակավարների հետ:

Քաղաքապետունք- ների թեմաները կարմիր բանակա- յինների հետ	Հրահանգչական պա- րագմունքների թե- մաները խմբակավար ների հետ:	Պարտա- տունք թվեր	Միջ- ժամերի թվեր
1. Ինչպես բանվոր- ներն ու գյուղա- ցիներն սկսեցին կազմակերպվել հեղափոխական պայքարի համար	1. Բոլշևիկյան կու- սակցութեան հիմ- նադրումն ու 1905 թվի հեղա- փոխութունը:	3	8
2. Ինչպես բանվոր- ներն ու գյուղա- գյուղացիները պայքարեցին 1905 թվին:			
3. Ինչպես բանվոր- ներն ու գյուղա- ցիները տապալե- ցին ցարին:	2. Փետրվարյան ու հոկտեմբերյան հեղափոխու- թյունները:	3	8
4. Ինչպես բանվոր- ները նվաճեցին խշտանո թյունը Հոկտեմբերին:			

5. Սոցիալիստական արդյունարերու- թյունը չեկրորդ հազամյակում:	3. Սոցիալիստական արդյունարերու- թյունն ու նրա խնդիրները:	3	8
6. Ընդ. Ստալինի 6 պայմանները:			
7. Գյուղատնտեսու- թյունը չեկրորդ հազամյակում:	4. Գյուղատնտեսու- թյան սոցիալիս- տական վրակա- սույման խնդիր- ներն ու կրթու- տեսութեան շե- նքերի կազմակերպչա- կան տնտեսա- կան ամբողջումը:	3	8
8. Պաշարը բեր- քավութեան համար:			
9. Կոտնտեսային արտադրութեան խնդիրներն ու կազմակերպումը			
10. ՄՏԿ ու խորհան տնտեսութունները			
11. Ինչպես առաջա- ցուց կոմիսար- ներ:	5. Կոմիսարների հա- մառու պատմու- թյունը:	3	8



12. Հետզատերազմյան կապիտալիզմ:	6. Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը, կապիտալիստական ստարիլիզացիայի վախճանը և հեղափոխությունների ու պատերազմների նոր տուրին անցումը:	3	8
13. Աշխատավորների հեղափոխական պայքարը կապիտալի չլրկրներում			
14. Աշխատավորների հեղափոխական պայքարը գաղութներում;			

15. Նոր իմպերիալիստական պատերազմների պատրաստությունը:	7. Նոր իմպերիալիստական պատերազմների պատրաստությունը և իՍՆՄ միջազգային դրությունը:	3	8
16. ԽՍՀՄ կապիտալիստական շրջապատման մեջ:			
17. Կոմիստերնի պայքարը պատերազմների ու ինտերվենցիաների դեմ:			

Ընդամուրը	21	56
Թեզ երվ ընթացիկ քաղաքականութ. թեմաների մշակման համար	—	24
Ընդամենը	—	80

Քաղաքաբալուսների համար այն դասակի հրամատարների հետ, վորոնց բույլատրված չե քաղաքաբալուսներ անցնել կարմիր բանակայինների հետ

№№	ԹԵՄԱՅԻ ԱՆՈՒՆԸ	Ժամերի
ըստ կարգի		Բիվը
1.	Կարմիր բանակի ու քաղաքացիական պատերազմի պատմություն հիմնական ետապները . . . . .	5*
2.	Մարքս-Լենին-Ստալինի ուսմունքի հիմունքները՝ կապիտալիզմի, նրա զարգացման ու անխուսափելի կործանման մասին . . . . .	5
3.	Մարքս-Լենին-Ստալինի ուսմունքի հիմունքները՝ պետություն ու սրբոլետարիատի դիկտատուրայի մասին . . . . .	5
4.	Համկոմկուսը բանվոր դասակարգի առաջնորդն է . . . . .	5
5.	Բոլշևիկյան կուսակցություն հիմնադրումն ու 1905 թվի հեղափոխությունը . . . . .	5
6.	Փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխությունները . . . . .	5
7.	Սոցիալիստական շինարարություն լենինյան պլանն ու նրա իրագործումը . . . . .	5
8.	Առաջին հնգամյակի արդյունքները . . . . .	5
9.	Յերկրորդ հնգամյակի խնդիրները . . . . .	5
10.	Սոցիալիստական արդյունաբերությունն ու նրա խնդիրները . . . . .	5

\* Յերկու ժամ պարապմունքի և 3 ժամ խմբակային զրույցի համար:



11. Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակա-  
կառուցման խնդիրները և կոլտնտեսութեանները  
կազմակերպչական — տնտեսական ամբաստանումը . . . 5
12. Կոմիտեերի համառոտ պատմութեանը . . . . . 5
13. Կապիտալիզմի ընդհանուր ճշմարտութեամբ, կապիտա-  
լիստական կայունացման վախճանը և հեղափոխու-  
թեանները ու պատերազմի նոր տուրքին կատարվող  
անցումը . . . . . 5
14. Նոր իմպերիալիստական պատերազմների պատ-  
րաստութեանը և ԽՍՀՄ միջազգային դրութեանը . . . 5

Ընդամենը . . . . . 70

Ռեզերվ ընթացիկ քաղաքականութեան թեմաների  
մշակման համար . . . . . 10

Ընդամենը . . . . . 80

**ՄՐԱԳԻՐ ԲԱՆԱԲԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԵՐՆԵՐԻ  
ՀԱՍԱՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԵՏ  
(Յեկամյա դատրեքացի)**

**ՀԱՏՎԱԾ I. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՆ ՌԻ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ՔՆՄԱ 1-ԻՆ. ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋ ՅԵԿԱՎ ԿԱՐՄԻՐ  
ԲԱՆԱԿԸ**

Ֆարսիան բանակը, վորպես ցարի, կալվածա-  
տերերի ու կապիտալիստների իշխանութեան հենա-  
բան, ցարիզմի իմպերիալիստական քաղաքականու-  
թեան դործիք, հեղափոխական պայքարը ճնշելու  
զործիք: Այսպիսով զատակարարապէս կազմը և  
խարսդանային կարգապահութեանը ցարական բա-  
նակում: Զինվորների, — բանվորների ու գյուղացի-  
ների, — հարստահարված դրութեանը հին բանա-  
կում: Բողոքիների հեղափոխական աշխատանքը  
հին բանակում: Զինվորների ու նավաստիների հե-  
ղափոխական շարժումը 1905—1907 թթ.: Բանակի  
Ժողովրդի կողմն անցնելը 1917 թվի փետրվարին:  
Հեղափոխական զինվորների ու նավաստիների մաս  
նակցութեանը Հոկտեմբերեան ապստամբութեան



մեջ: Հին բանակի քայքայումն ու ջրումը հոկտեմբերից հետո:

Լենինը բանվորների ու աշխատավորների սպառազինման նշանակութեան ու խնդիրները մասին: Կուսակցութեան պայքարը բանվորների սպառազինման համար, հոկտեմբերյան հեղափոխութեանից առաջ: Բանվորական դրոժինաները և բանվորների գինված ապստամբութեանները 1905 թ.: Բանվորական կարմիր զվարդիա ստեղծվելը 1917 թվին: Կարմիր զվարդիայի և Հին բանակի հեղափոխական զորամասերի գերը 1917 թվի հոկտեմբերին:

Հոկտեմբերյան Հեղափոխութեան միջադրային նշանակութեանը: Ոտարեղիցյա իմպերալիստների և տապալված ռուսական կարգաձառների ու կապիտալիստների ատերութունը դեպի խորհրդային իշխանութեանը: Խորհրդային կառավարութեան ձգտումն իմպերալիստական պատերազմից դուրս գալու և իմպերալիստների կողմից հեշտութուն կնքել չկամենալը: Գերմանական իմպերալիզմի հարձակումը և Բրեստի հաղթութեանը: Գեկրեա կարմիր բանակ ստեղծելու մասին: Կուսակցութեան լարված աշխատանքի սկիզբը Կարմիր բանակ ստեղծելու վերաբերյալ:

Գրականութեան<sup>1)</sup>

1. ՎՈՐՈՇԻՆՈՎ. — Կարմիր բանակի տասնամյակը «Մարքսիզմ Լենինիզմը պատերազմի ու բա-

1) Մրագրում մտայնանշված ամբողջ գրականութեանը նկատել յե առնված խմբակավարների ու նրանց ողնականների պատրաստութեան համար: —

նակի մասին» ժողովածու Գերոնիմուսի խմբագրութեամբ. կոս հրատ 1932 թիվ. էջ 235-242:

2. ՌԱԲԻՆՈՎԻՉ. — Քաղաքացիական պատերազմի պատմությունը. գլուխ 1-ին և 2-րդ:

ԹԵՄԱ 2-ՐԴ. — ԻՆՉՊԵՍ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ  
ՀԱՂՈՒՅՑ ՍՊԻՏԱԿ ԳՎԱՐԴԻԱԿԱՆՆԵՐԻՆ ՅԵՎ  
ԻՆՏԵՐՎԵՆՏՆԵՐԻՆ

Քաղաքացիական պատերազմի և Անտանտի ինտերվենցիայի սկիզբը: Ինտերվենտների զորքերի առի իջնելն ու Չեխոսլովակների հարձակումը 1918 թվի ամբանը: Ինտերվենտների կողմից յերկրի ներսում հակահեղափոխական կուլակային ապստամբութեաններ կազմակերպելը: Յերխասարդ Կարմիր բանակի հերոսական պայքարը խորհրդային Վոլգայի համար և Չեխոսլովակների ՉախՉախումը: Հակահեղափոխական զորքերի ՉախՉախումը Յարիցինի ճակատում՝ ընկ. ընկ. Ստալինի և Վորոշիլովի ղեկավարութեամբ: Հեղափոխութեանը Գերմանիայում և գերմանական զորքերի հեռանալն Ուկրաինայից: Հեղափոխական շարժումն ինտերվենտների բանակներում, վորպես պատճառ, վոր ստիպեց ինտերվենտներին հեռացնել իրենց զորքերին խորհրդային յերկրից:

Անտանտի 1-ին արշավը: Գլխավոր հարվածն արեւելքից (ժովակալ Կուլչակ): Կուսակցութեան լուսնոցը՝ «Խորհրդ պայքարելու Կուլչակի դեմ»: Ճակատի համար կոմունիստների կոմյերիտականների, արձմիրութեանների անդամների մոբիլիզա-



քիան: Ռազմական կոմունիզմի քաղաքականութեան անցնելը: Բանվորների ու գյուղացիների ուղղա- քաղաքական դաշինք ստեղծելն ու ամրացնելը՝ բան վոր դասակարգի ղեկավարութեամբ: Պաշտպանու- րութեան խորհրդի կազմակերպումը՝ Լենինի գլխավո- րութեամբ, և կուսակցութեան շարված աշխատան- քը Կարմիր բանակի ամրացման համար: Կուլակի ջախջախումը Կարմիր բանակի կողմից բանվորնե- րի ու գյուղացիների պարտիզանական ջոկատների աջակցութեամբ: Սպիտակների ջախջախումը Պետ- րոզերադի ճակատում ընկ. Ստալինի ղեկավարու- րութեամբ: Լենինի նամակը Կուլակի դեմ տարած հաղ- թանակի առթիվ:

Անտանտի 2-րդ արշավը: Գլխավոր հարվածը Հարավից Մոսկովայի վրա (դեկտեմբեր Դեկտեմբեր): Յուգոսլաւիայի հարձակումը կարմիր Պիտերի վրա: Կուսակցութեան լողունը՝ «Բոլորով պայքարելու Դեկտեմբերի դեմ»: Կոմունիստների մոբիլիզացիան: Կարմիր բանակի ամրացումը: Կարմիր հեծելազոր ստեղծելը: Ընկ. Ստալինը, վորպէս Դեկտեմբերի դեմ հաղթանակների կազմակերպիչ: Դեկտեմբերի ջախ- ջախման պլանը, վորն առաջարկել էր ընկ. Ստալի- նը և այդ պլանի հաղթական իրադրոծումը: Լենին- յան աղբային քաղաքականութեան դերը Դեկտեմբերի դեմ տարած հաղթանակում: Պիտերի բանվորների հերոսական պայքարը և Յուգոսլաւիայի ջախջախումը:

Անտանտի 3-րդ արշավը:—Լեհաստանն ու Վը- րանդելը, վորպէս Անտանտի 2 ձեռքերը:

Կարմիր բանակի կռիվը սպիտակ լեհերի դեմ:

Իմպերիալիստների ողնությունը լեհական բուրժու- ազիային: Միջազգային պրոլետարիատի պայքա- րը խորհրդային յերկրի պաշտպանութեան համար: Լեհաստանի հետ հաշտութեան կնքելը, վորպէս խորհրդային յերկրի հաղթանակ: Կարմիր բանակի հերոսական կռիվը Վրանդելի դեմ և նրա զորքերի ջախջախումը:

Ռազմական կոմունիզմից ՆԵՊ-ին անցնելը: Կարմիր բանակի կողմից բանդիտիզմի և հակահե- դափոխական ապստամբութեանների ջախջախում- մը:

Կարմիր բանակի խաղաղ դրութեան անցնելը: Լենինյան ավանդը՝ պահպանել յերկրի ու կարմիր բանակի պաշտպանունակութեանը աչքի լույսի պէս: Կարմիր բանակի հիմնական վերակառուցու- մը, վոր սկսվեց կուսակցութեան Կենտկոմի ղեկա- վարութեամբ՝ ուղղա-ժողով-ժողովում ընկ. Յրոնդեյի կողմից և ավարտեց ուղղա ժողովողիում ընկ. Վորո- շիլովը:

Չինական սպիտակ բանդիտների հարձակումը Չինարեւելյան յերկաթգծի վրա 1929 թվին, վոր- պէս իմպերիալիստների կողմից սվինով մեր կորույր շոչաիելու փորձ: Հատուկ Հեռալոր Արևելյան Կարմրազորչ բանակի հերոսական պայքարը և սպի- տակ չինացիների ջախջախումը:

Կարմիր բանակն առաջին հնգամյակի տարիներում: Առաջին հնգամյակի հաղթական կատարումը: ԲԳԿԲ տեխնիկական հագեցումը և կարմիր բանակը առաջավոր ժամանակակից բանակ դարձնելը: Ընկ. Ստալինի բացառիկ դերը յերկրի



պաշտարաննունակութեան և կարմիր բանակի բարձրացման դորձում: Կարմիր բանակը, վորպես սոցիալիզմի հզոր պահակ:

Գրականութիւն.—

1. Լենին.—Նամակ բանվորներին ու գյուղացիներին Կոլչակի դեմ տարած հաղթանակի առթիվ: յերկ. Ժող. հրատ. 2-3 հատ. 14-րդ եջ 431:

2. Լենին. Նամակ Ուկրայինայի բանվորներին և գյուղացիներին Գեներալի դեմ տարած հաղթանակների առթիվ: Յերկ-Ժող. հրատ. 2-3 հատ. 24, եջ 655:—

3. Ռաբինովիչ.—Քաղաքացիական պատերազմի պատմութիւնը: Գլուխ 3-րդ, 4-րդ 5-րդ և 6-րդ:

ԹԵՄԱ 3-րդ.—Կարմիր բանակը բանվորական պետութեան բանակն է: Կարմիր բանակը վորպես յանվորների ու գյուղացիներին ազատագրման բանակ, պրոլետարական իշխանութեան հենարան, սոցիալիստական սեփականութեան պահակ:

Կարմիր բանակի մարտիկն ի տարբերումն կապիտալիստական բանակների գինվորից, կռւում է իր դասակարգային շահերի համար: Կարմիր բանակը բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութեան զինված զաշինքն է:

Կարմիր բանակը ՈՍՀՄ Ժողովրդների յեղբայրութեան բանակն է: Կարմիր բանակի հիմնական տարբերութիւնն կապիտալիստական բանակներից, վորոնք հանդիսանում են ազդային հարստահարման դորձիք:

Կարմիր բանակը համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան բանակ է: Կարմիր բա-

նակի հիմնական տարբերութիւնը կապիտալիստական բանակներից, վորոնք հանդիսանում են իմպերիալիստների հափշտակիչ քաղաքականութեան դորձիքը: Կարմիր բանակի ինտերնացիոնալ բնույթը, վոր պահպանում է ՈՍՀՄ-ն,— համաշխարհային պրոլետարիատի հայրենիքը:

Համկոմկուսը (բ) Կարմիր բանակի կազմակերպիչն ու առաջնորդն է: Լենինի դերը Կարմիր բանակի ստեղծման դորձում, քաղաքացիական պատերազմի տարիներում նրա հաղթանակների կազմակերպման դորձում: Լենինի ավանդները Կարմիր բանակի մասին: Ընկ. Ստալինի դերը քաղաքացիական պատերազմի տարիներում և Ժամանակակից շրջանում Կարմիր բանակի ղեկավարութեան մեջ: Կարմիր բանակի առաջնորդ ռազմաօդային զորքերը, վորոշիտիչը, վորպես ամենահին բուլշևիկ, Համկոմկուսի Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ:

Կարմիր բանակի, բանվորական պետութեան բանակի, առանձնահատկութիւնները, Կարմիր բանակի բուլշևիկյան հաստատուն ղեկավարութիւնը,—վորպես հիմք քաղաքացիական պատերազմի տարիներում նրա հաղթանակների համար, վորպես յերաշխիք նրա անընդհատ ամբողջական համար և անխորտակելի կորովի համար իմպերալիզմի դեմ գալիք մարտերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. ՍՏԱԼԻՆ: Ճառը Մոսկվայի Քաղխորհրդի հանդիսավոր նիստում 1928 թվի փետրվարի 25-ին, «Մարքսիզմ ու լենինիզմը պատերազմի ու բանակի մասին» Ժողովածու Գերոնիմուսի խմբագրութեամբ եջ 223-225:



2. **ՅՐՈՒՆՁԵ.** Լենինն ու կարմիր բանակը,»  
«Մարքսիզմն ու Լենինիզմը Կարմիր բանակի  
մասին» ժողովածու Գերոնիմուսին խմբագրու-  
թյամբ, էջ 226-230:

3. **ՎՈՐՈՇԻԼՈՎ.** Ստալինն ու կարմիր բանակը  
«Մարքսիզմն ու Լենինիզմը պատերազմի և բանակի  
մասին», ժողովածու Գերոնիմուսի, էջ 117-133:

4. «Պրավդա» 1931 թվի փետրվարի 2-ից «Վո-  
րոշիլովը վորպես Կարմիր բանակի կուսակցական  
ու պրոլետարական առաջնորդ».  
«Մարքսիզմ Լենինիզմը պատերազմի ու բանակի մասին» ժողովածու  
Գերոնիմուսի խմբագրությամբ, էջ 231-234:

ԹԵՄԱ 4-րդ. —

#### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ. —

Կարմիր բանակի բացահայտ դասակարգային բնույթը: Կարմիր բանակի շարքերը դասակարգայինորեն խորթ տարրեր չլիցեն: Դասակարգային համախմբվածությունը, վորպես Կարմիր բանակի մարտունակության հիմք: Կարմիր բանակի դասակարգային համախմբվածության ամրացումը, սոցիալիստական շինարարության վիթխարի հաղթանակները և Կարմիր բանակի նկատմամբ բուլշևիկյան հաստատուն ղեկավարության հիման վրա: Յուրաքանչյուր Կարմիր բանակայինի պարտականությունն է ամեն կերպ ամրացնել Կարմիր բանակի շարքերի համախմբվածությունը: Յերկրային սիստեմը Կարմիր բանակի շինարարության կարևորագույն հիմքերից մեկն է: Յերկրային զորամասերի կազմակերպումը: Ընդհանուր ռազմական ուսու-

ցում: ՊԱՋԸ-Ավաքիմ: Կարմիր խաչի ընկերու-  
թյուն: Ավտոդոր:

Կարմիր բանակում լենինյան ազգային քաղաքականության իրազործումը: Ազգային զորամասեր:

Կարմիր բանակի պետկազմը: Նրա դասակարգային կազմը: ԲԳԿԲ մարտիկների ու հրամանատարների դասակարգային համախմբվածությունը: Հրամատարը զորամասի ղեկավարն է ու մարտական առաջնորդը: Յերկաթե զինվորական կարգապահությունը Կարմիր բանակի մարտական կորովի հիմքն է: Կարգապահության դասակարգային եյությունը ԲԳԿԲ, նրա տարբերությունը բուրժուական բանակների կարգապահությունից: Կարգապահության նշանակությունը խոշոր ժամանակ ու մարտական պարագայում: Հրամանատարի հրամանը որենք է մարտիկի համար: Կարգապահական տույժեր, խրախուսանքներ ու պարգևներ: Կարմիր բանակի պարտականությունն է պահպանել ռազմական դաշտնիքը:

Կուսակցական քաղաքական աշխատանքը ԲԳԿԲ ու նրա խնդիրները: Կարմիր բանակն առաջնակարգ դպրոց է: Քաղ աշխատողներն ու քաղ մարմիններն ԲԳԿԲ-ում: Կուսակցական քաղաքական աշխատանքի կազմակերպումը: Կուսակցական բջիջները կարմիր բանակում ու նրանց խնդիրները: Կոմյերիտական կազմակերպությունները ԲԳԿԲ-ում: Կոմունիստներն ու կոմյերիտականները ԲԳԿԲ-ում, վորպես առաջավորներ ուսուցման ու կարգապահության մեջ, տեխնիկայի տիրապետման մեջ, վորպես



մարտնչողներ կուսակցութեան գլխավոր դժի համար:

Կարմիր բանակայինը ԽՍՀՄ իրավադր թաղաքացին է: Կարմիր բանակի կապը աշխատավորների հետ: Բանվորական շեֆություն:

Սոցիալիստական մրցակցությունն ու հարվածայնությունը Կարմիր բանակում:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

Նույնը ինչ Յ-րդ թեմայի համար:

ԹԵՄԱ 5-րդ .—

### ՏԵՆՆԻԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ:

Տեխնիկայի դերը դավիթ պատերազմում: Թղթեր և որինակներ, վորոնք բնորոշում են ռազմական տեխնիկայի զարգացումն ու նրա կորովը և նշանակությունը ժամանակակից պատերազմում: Բանակի տեխնիկայի կախումը յերկրում արդյունաբերութեան զարգացման մակարդակից: Առաջին հնդամյակի հաղթական կատարումը և ԲԳԿԻ տեխնիկական հաղեցումը:

Մարտիկի խնդիրն և տեխնիկայի տիրապետման մեջ, դիտենալ իր մեքենան, կարողանալ ողտվել նրանից մարտական պարազայի զանազան պայմաններում, կարողանալ համազործակցել իր տեխնիկայի հետ և կովեթ հակառակորդի տեխնիկայի դեմ, պահպանել զենքն ու մեքենաները աչքի լույսի պես: Յերկաթե կարգապահությունը տեխնիկա-

յի տիրապետման գրավականն է: Անկարգապահությունը վթարումների ու դժբախտ դեպքերի պատճառն է:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. ՎՈՐՈՇԻԼՈՎ 16-րդ կուսիսականումարում արտասանած նախը. «Մարքսիզմ ու լենինիզմը սյառերազմի ու բանակի մասին»: Ժողովածու Գեոնիմուսի խմբագրութեամբ էջ 256-266:

2. ՎՈՐՈՇԻԼՈՎ.— Կարմիր բանակի 15 տարիներ:— Ձեկուցում Մոսկվայում հոբեյցանական հանդիսավոր նիստին 1933 թվի փետրվարի 23-ին:

### ՀԱՏՎԱԾ II.

### ԻՆՁԻ ՀԱՄԱՐ ԵՆ ՊԱՅԲՈՐՈՒՄ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳՆ ՈՒ ՆՐԱ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 6-րդ.—

Կապիտալիզմը հարստահարման ու շահագործման իրավակարգ է:

Կապիտալիզմը մի իրավակարգ է, վորն արձատապես տարբերվում է մեր սոցիալիստական իրավակարգից: Արտադրութեան գործիքների ու միջոցների կապիտալիստների մասնավոր սեփականությունը կապիտալիզմի հիմքն է: Մի բուռ կապիտալիստների կողմից արտադրութեան իրենց պատկանած գործիքների ու միջոցների ողնութեամբ բանվորների և աշխատավորների հակայական մեծամասնութեան շահագործումը:



Դասակարգներն ու դասակարգային պայքարը կապիտալիստական հասարակարգում: Բանվորների և աշխատավորների հարստահարված դրուժյունը, իրավագրկութունը և աղքատացումը կապիտալի յերկրներում: Կապիտալիստների կողմից շահույթի յեակեից ընկնելը, վորպես կապիտալիստական արտադրության շարժիչ ուժ: Մրցումը, մանր տրնտեսատերերի վտարումը խոշոր տնտեսատերերի կողմից, կապիտալիստական տնտեսության անկալմակերպվածութունը, անալանայնությունը և նրանց հետևանքները աշխատավորների համար: Ճգնաժամերը, գրանց պատճառները, դրանց արտահայտությունը, դրանց անխուսափելիութունը պատերազմի որոք, դրանց հետևանքները աշխատավորների համար (ժամանակակից ճգնաժամի որինակներով):

Կապիտալիստական պետությունը, վորպես մեքենա, վորը պահպանում է կապիտալիստական իրավակարգը և կապիտալիստների մասնավոր սեփականությունը արտադրության գործիքների ու միջոցների նկատմամբ, վորպես ապարատ կապիտալիստների կողմից աշխատավորներին կեղեքելու համար:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—**

1. **ԼԵՆԻՆ.—** Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրի նախագիծն ու բացատրությունը ընտիր յերկեր (6 հատորյակ). հատոր 1-ին էջ 246-257:
2. **ՄՏԱԼԻՆ.—** Քաղհաշվետվություն 16-րդ

կուսիսմագումարում. հատված «Տնտեսության կապիտալիստական, թե սոցիալիստական սխաւամ»:

3. **ՍԿՊՍԼ.—** Քաղաքական տնտեսության համառոտ դարընթաց. դուխ 2-րդ և 7-րդ:

ԹԵՄՍ. 7-րդ.—

**ԿՍՊԻՏԱԼԻՉՄԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԱՆԵՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ:**

Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի զարգացման հատուկ շրջան: Իմպերիալիզմի որոք կապիտալիզմի բոլոր հակասությունների չտեսնված սրումը: Իմպերիալիզմի 3 հիմնական հակասությունը. բանվոր դասակարգի ու բուրժուազիայի միջև. տիրապետության համար իմպերիալիստական յերկրների միջև:

Իմպերիալիստական պատերազմները: Նրանց պատճառները: Նրանց հետևանքներն աշխատավորների համար: Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի վերջին ետապ, վորպես պրոլետարական համաշխարհային հեղափոխության նախորդ: Հեղափոխության անխուսափելիությունը: Կապիտալիզմի հեղափոխական տապալման անխուսափելիությունը բանվոր դասակարգի կողմից, վորին ապահովված է միլիոնավոր աշխատավորների աջակցությունը կապիտալիստների յերկրներում ու զաղուլիներում, իմպերիալիստների ձեռքով հարստահարվողների աջակցությունը:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—**

1. **ՄՏԱԼԻՆ.—** Քաղհաշվետվություն 16-րդ կուսիսմագումարում, հատված «Համաշխարհային տնտեսական ճգնաժամը»:



2-1. ՍԵՅՍԼ. — Քաղաքական տնտեսության համառոտ դասընթաց. գլուխ 8-րդ:

ԹԵՄԱ 8-րդ

Կոմունիզմ ու սոցիալիզմ.—

Արտադրութեան դործիքները ու միջոցները կոմունիստական հանրային սեփականութեանը կոմունիզմի հիմքն են: Կոմունիզմն անդասակարգ հասարակութեանն է, հասարակութեանն առանց պետութեան: Կոմունիստական տնտեսութեանը, վորպէս կազմակերպված տնտեսութեան: Տեխնիկայի չտեսնված աճումը կոմունիզմի դորք: Ներհակութեան մոնոպոլիզմը քաղաքի ու գյուղի միջև, Ֆիզիկական ու մտավոր աշխատանքի միջև: Մարդկանց կոմունիստական վերադաստիարակումը: Արտադրութեան, կուլտուրայի չտեսնված բարդավաճումը: Հանրային հարստութեան վիթխարի աճումը կոմունիզմի որոք: Բաշխման սկզբունքը կոմունիզմի որոք՝ յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակութեանների, յուրաքանչյուրն ըստ կարիքի:

Սոցիալիզմը, վորպէս կոմունիզմի առաջին ետապ: Սոցիալիզմի որոք վերջնականապէս չեն վոնչնչացված դասակարգերն ու դասակարգային տարբերութեանները, չի վերացված ներհակութեանը, Ֆիզիկական ու մտավոր աշխատանքի, քաղաքի ու գյուղի միջև: Բաշխման կարգը սոցիալիզմի որոք ըստ աշխատանքի, վորպէս միակ հնարավոր կարգ: Պետական իշխանութեան պահպանումը սոցիալիզմի որոք (պրոլետարական դեկտատուրայի

ամեն կերպ ամրացումը ԽՍՀՄ-ում): Սոցիալիզմի անցումը լիակատար կոմունիզմին՝ հեղահետ յերք աճում է տեխնիկան, կուլտուրական և վերադաստիարակվում են մարդիկ:

Հանրային տնտեսութեան, կուլտուրայի և աշխատավորների բարեկեցութեան աճումը ԽՍՀՄ-ում, — վորտեղ ավարտված է սոցիալիզմի հիմքի կառուցումը, — վորպէս սոցիալիզմի առաջնութեանների ամենավառ ապացույց կապիտալիզմի հանդեպ:

Գրականութեան.—

1. Կոմիստերնի ծրագիրը, — գլուխ 3-րդ «Կոմունիստական Ինտերնացիոնալի վերջնական նպատակն է՝ համաշխարհային կոմունիզմը»:

2. Լենինի Պետութեանն ու հեղափոխութեանը, — ընտիր յերկեր. հատոր 4-րդ, էջ 57-71:

3. ՄՏԱԼԻՆ.— Զրույց 1-ին ամերիկական բանվորական պատվիրակութեան հետ: 12-րդ հարցի պատասխանը:

ԹԵՄԱ 9-րդ.—

Բանվոր դասակարգը աշխատավորների առաջնորդն է.—

Բանվոր դասակարգը կապիտալիստական հասարակութեան ամենից հետեւողական հեղափոխական դասակարգն է, կապիտալիզմի դերեզմանափոքն է, կոմունիզմի կառուցողն է: Այն պայմանները, վորոնք աղահուլում են բանվոր դասակարգի



պատմական դերը. կապիտալիզմի որոք լանվոր  
դասակարգի մոտ արտադրութեան գործիքների ու  
միջոցների սեփականութեան բացակայութեանը,  
բանվոր դասակարգի վճռական դերը արտադրու-  
թեան մեջ, նրա կոփումն ու համախմբումը՝ Փար-  
րիկներում ու գործարաններում կանարած միասեղ  
աշխատանքում: Նրա միջազգային կապն ու համե-  
րուչութիւնը: Աշխատավոր գյուղացիութիւնը  
վորպես բանվոր դասակարգի դաշնակից: Աշ-  
խատավոր գյուղացիների կեղեքումը կապիտա-  
լիզմի որոք: Գյուղացիութեան շերտավորումը կա-  
պիտալիզմի որոք: Կուլակներ, միջակներ չքավոր-  
ներ: Գյուղատնտեսութեան զարգացման կապիտա-  
լիստական ուղին, վորպես մի ուղի, վոր քայքայում  
ու կործանում է բերում աշխատավոր գյուղացիու-  
թեան ճնշող մեծամասնութեանը: Գյուղացիութեան  
հսկայական մեծամասնութեան շահագրգռվածու-  
թիւնը կապիտալիզմի տապալման և կոմունիզմի  
հաղթանակի մեջ: Այն պատճառները, վորոնք խան-  
գարում են աշխատավոր գյուղացիներին ամուր կեր-  
պով համախմբելու բուրժուազիայի ու կալվածա-  
տերերի դեմ պայքարելու համար. արտադրութեան  
գործիքների ու միջոցների սեփականութեան առկա-  
յութիւնը, գյուղացու «յերկու հոգին», մանր գյու-  
ղացիական տնտեսութեան բաժան-բաժան լինելը  
մանր գյուղացիների միմյանցից անջատված լինե-  
լը: Բանվոր դասակարգի ղեկավարութիւնը գյու-  
ղացիութեան նկատմամբ, վորպես միակ պայման,  
վորը կարող է ապահովել շահագործողների դեմ  
հաղթանակը և գյուղացիների ազատագրումը դարա

վոր ստրկութիւնից և կեղեքումից: ԽՍՀՄ կոր-  
տնտեսային շինարարութեան հաղթանակների հա-  
մաշխարհային պատմական նշանակութիւնը կապի-  
տալիստական յերկրների ու գաղութներէ դյուղա-  
ցիների հեղափոխական պայքարի համար: Կոր-  
տնտեսային ուղին միակ էլ չա ուղին է:

Բուրժուազիայի և կուլակութեան ձգտումն ու-  
պորտունիստների ոգնութեամբ ոգտագործելու  
գյուղացիութեան տատանումները՝ խղելու համար  
գյուղացիութեան՝ բանվոր դասակարգի ղեկավա-  
րութեամբ դաշինքը բանվորների հետ: Բանվոր դա-  
սակարգի ու նրա կուսակցութեան խնդիրն է՝ հաղ-  
թահարել գյուղացիութեան տատանումները աանել  
նրան իր յեաեվից, վճռական անխնա պայքար մղել  
աշխատավոր գյուղացիութեան ղեկավարութեան  
համար, ընդդեմ դասակարգային թշնամու ու նրա  
գործակալների՝ ոպորտունիստների:

Գրականութիւն.—

1. Լենին.— Դեպի գյուղական չխավորու-  
թիւնը: Ընտիր յերկեր. հատ. 1-ին. էջ 468-517:

2. Ստալին.— Ճառը հարածային կոլտնտեսա-  
կանների համագումարում:

3. ԿԱԳԱՆՈՎԻԶ.— Կոլտնտեսութիւնների առ-  
բացումը և գարնանացանի խնդիրները:

Զեկուցումը կոլտնտեսականների առաջին Հա-  
մամիտութեան համագումարում, հատված 2-րդ:

ԹԵՄԱ 10-ԲԴ.—

Պրոլետարիատի դիկտուրան.—

Կապիտալիզմի տապալման տնկրածեչտու-







տուրայի մասին: Ընտիր յերկեր. հատոր 4-րդ. էջ 165—178:

2. ՄՏԱԼԻՆ.— Բանվորա-գյուղացիական կառավարութեան հարցի առթիվ:

3. ՄՈԼՈՏՈՎ.— Խորհուրդներն ու հարվածային կոլտնտեսականների խնդիրները.— Ճառ կոլտնտեսականների 1-ին Համամիութենական համագումարում:

ԹԵՄԱ 12 -ԲԴ.—

Համկուրկուսը բանվոր դասակարգի առաջնորդն է.

Բանվոր դասակարգի ուժը կազմակերպման մեջ է: Բոլշևիկյան կուսակցութիւնը, վոր դաստիարակված ու կոփված է ընկ. Լենինի ձեռքով, բանվոր դասակարգի ամենակազմակերպված ջոկատն է, նրա յայնպէս մարդկանց հավաքակցանն է, նրա ավանգարդն է: Կուսակցութիւնը զինված է առաջավոր հեղափոխական թեորիայով: Կուսակցութեան յերկաթե կարգապահութիւնն ու կազմակերպվածութիւնը նրա կորովի յերաշխիքն է: Կուսակցութեան անխզելի կապը մասսաների հետ: Կուսակցութեան լենինյան Կենտկոմը, Բաղբյուրոն, կուսակցութեան առաջնորդ ընկ. Ստալինը:

Կուսակցութեան ղեկավարութիւնը բանվոր դասակարգի բոլոր կազմակերպութիւնների նկատմամբ: Կուսակցութեան ղեկավարութեան վճռական դերը պրոլետարական դեկտատուրայի ամբողջամբ համար:

Ուորտունիստները բուրժուազիայի ազենտներն են յանվոր դասակարգի ու նրա կուսակցութեան շարքերում: Ուորտունիզմի յերկու հիմնական այլաձեւութիւն: Կուսակցութեան անհաշտ պայքարն ուորտունիզմի դեմ՝ յերկու ճակատով, ինչպէս նաև հաշտվողականութեան ու յերկերեսանիութեան դեմ կուսակցութեան ամբողջան յերաշխիքն է:

Աջ թեքումը գլխավոր վտանգն է տվյալ ետապում:

Կուսակցութեան անդամի պարտականութիւնները: Կոմունիստի գլխավոր պատգամները: Ընդունելութեան կարգը կուսակցութեան մեջ: Թեկնածուական ստաժի և համակրողներ ինստիտուտի նշանակութիւնը:

Կուսակցական գտումների նշանակութիւնը: Կուսակցութեան 1933 թվի գլխավոր գտումը ու նրա խնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցութեան կանոնադրութիւնը:

2. ԼԵՆԻՆ.— «Ձախութեան» մանկական հիվանդութիւնը կոմունիզմում, գլուխ 2-րդ, 3-րդ և 4-րդ ընտիր յերկեր. հատոր 5, էջ 414—427:

3. ՄՏԱԼԻՆ.— Լենինիզմի հիմունքների մասին:— Գլուխ 8-րդ «կուսակցութիւնը»:



ԹԵՄԱ 13-րդ.—

Մարքս, Ենգելս, Լենին, Ստալին:

Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը բանվոր դասակարգի հանձնարող առաջնորդներն են:

Մարքսը պրոլետարական կոմունիստական մեծագույն ուսմունքի, մարքսիզմի հիմնադիրն է: Մարքսի հեղափոխական թեորիայի նշանակութունը պրոլետարիատի պայքարի համար: Մարքսն ու Ենգելսը, վորպես մեծագույն պրոլետարական հեղափոխականներ: Մարքսն ու Ենգելսը, վորպես բանվորների միջոցային միավորության, — 1-ին Ինտերնացիոնալի ստեղծողները: Մարքսի ու Ենգելսի անհատ պայքարն ու պրոլետունիստների դեմ:

Լենինը Մարքսի դործի մեծագույն շարունակողն է: Լենինիզմը իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների շրջանի մարքսիզմն է: Լենինը մեր կուսակցության ու կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադիրը և առաջնորդն է: Լենինը մեծագույն պրոլետարական հեղափոխականն է: Լենինի անհատ պայքարն ու պրոլետունիստների դեմ:

Ստալինը Լենինի լավագույն աշակերտն ու զինակիցն է կուսակցության և բանվոր դասակարգի առաջնորդն է: Ընկ. Ստալինը Լենինի դործի և ուսմունքի շարունակողն է, ԽՍՀՄ և ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի առաջնորդն է: Ընկ. Ստալինի բացառիկ դերն առաջին հնգամյակի մեծագույն պայանը ստեղծելու և կատարելու մեջ, յերկրորդ հնգամյակի պլանի ստեղծելու մեջ, համատարած կուլտիտիվացման հիման վրա, կուլակության, վոր-

պես դասակարգի, վերացման քաղաքականության հաղթական կենսագործման, ամբողջ սոցիալիստական շինարարության դործի և յերկրի պաշտպանության ղեկավարության մեջ: Ընկ. Ստալինը Կոմիտեերնի առաջնորդն է: Ընկ. Ստալինի անհատ պայքարը բոլոր գույնի ու պրոլետունիզմի դեմ: Նրա ղեկավարությամբ կուսակցության կողմից հակահեղափոխական տրոցկիստների «ձախ» և աջ ուղորտունիստների ջախջախումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. «Կարլ Մարքսը». քեդիսիեր ԻՄԵԼ.— Մահվան 50-ամյակի առթիվ. «ԲԳԿԲ պրոպագանդիստ» № 5 1933 թիվ:
2. ՄՍԱԼԻՆ.— Զբաղյց առաջին ամերիկական բանվորական պատվիրակութայան հետ: Պատասխան առաջին հարցին:
3. ԿԱԳԱՆՈՎԻԶ.— Ընկ. Ստալինը կուսակցութան ու բանվոր դասակարգի առաջնորդն է: Հողված այն ժողովածուից, վոր նվիրված է ընկ. Ստալինի ծննդյան 50-ամյակին:

ZUSVAT III

ԻՆՉՊԵՍ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆՎՈՐ ՏԱՊԱԼԵՑԻՆ ԿԱԼՎՍՏԱՆԵՐԵՐԻ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԻՆԻՍՏՆՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 14-րդ.—

Ինչպես բանվորներն ու գյուղացիները սկսեցին կռիվակերպել հեղափոխական պայքարի համար: Համառոտ անդեկություններ 19-րդ դարի վեր-



Չերքի ցարական Ռուսաստանի մասին: Յարական հառավարությունը, վորպես ազնվականների ու հարվածատերերի հառավարություն: Բանվոր դասակարգի իրավագրկությունն ու կեղեքումը: Գյուղացիության կիսաճորտային դրությունը: Յարական հառավարության կողմից ազգային ծայրամասերի հարստահարումը: Յարիզմը, վորպես միջազգային իմպերալիզմի պահպան շուն Արեվելքում:

Գյուղացիների հեղափոխական պայքարը ճորտատեր հարվածատերերի դեմ: (Ստեփան Ռազին, Եմելյան Պուգաչով, գյուղացիական ապստամբությունները ճորտատիրական իրավունքի վերացումից հետո): Կարվածատերերի կողմից գյուղացիական ապստամբությունների ճնշման պատճառները:

Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, բանվոր դասակարգի ծնունդն ու աճումը: Բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի սկիզբը: Բանվորական խռովություններ ու գործադուլներ, առաջին հեղափոխական խմբակների ստեղծվելը: Լենինի պայքարը բանվոր դասակարգի կուսակցություն կազմակերպելու համար:

Մեր կուսակցության 2-րդ համագումարը: Սոցիալ-դեմոկրատների պառակտումը բուլչեիկների ու մենչևիկների: Բուլչեիկները՝ Լենինի ղեկավարությամբ, վորպես բանվոր դասակարգի իսկական մարտական հեղափոխական կուսակցություն: Մենչևիկներն ու պորտուենիստներ, բանվոր դասակարգի գործի դավաճաններն են:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Լենին.— «Գյուղացիական ռեֆորմը և պրոլետարական-գյուղացիական հեղափոխությունը»: յեր. Ժող. Հրատ. 2 և 3. Հատ. 15 էջ 141:

2. Լենին.— Ճորտատիրական իրավունքի անկման 50-ամյակ: Յերկ. Ժող. Հրատ. 2 և 3, Հատ. 15 էջ 108:

3. ՊՈՊՈՎ Ն.— «Ուրվագիծ Համկոմկուսի պատմության» պրակ 1-ին, ներածական և 1-ին և 2-րդ գլուխ:

### ԹԵՄԱ 15-րդ.—

Ինչպես բանվորներն ու գյուղացիները պայքարեցին 1905 թվին:

Արդյունաբերական ճգնաժամն ու հեղափոխական շարժման աճումը 1905 թվի նախորդին: Բանվոր դասակարգի ու գյուղացիության շահագրգռվածությունը ցարիզմի դեմ վճռական հաղթանակ տանելու մեջ, բուրժուազիայի դավաճանական դիրքը: Յարիզմի դեմ հեղափոխության գնահատականը բուլչեիկների կողմից, վորպես բանվոր դասակարգի պայքարի առաջին եսապ պրոլետարական գիկաատուրայի համար:

Բուլչեիկների պայքարը բանվոր դասակարգի դաշինքի համար գյուղացիության հետ, բանվոր դասակարգի ղեկավար դերի համար հեղափոխության մեջ: Մենչևիկների ու Տրոցկու դավաճանական, բուրժուական դիրքը:

1905 թվի հեղափոխության հիմնական անցքերը: Հունվարի 9-ը և գործադուլային լայն պայ-



քարը: Գյուղացիական շարժումը: Շարժումը բանակում: Սորհուրդներ ստեղծելը: Հոկտեմբերյան գործադուլ: Դեկտեմբերյան զինված ապստամբությունը Մոսկվայում:

1905 թվի Հեղափոխութեան պարտութեան պատճառներն ու դասերը: Հեղափոխութեան ընթացքում բոլշևիկյան զժի ճշտութեան և մենշևիկյան քաղաքականութեան դավաճանական ելուձեան հատուտումը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Լեճին.— Ձեկուցում 1905 թվի հեղափոխութեան մասին:— Ընտիր յերկեր. հատոր I-ին, էջ 3—17:

### ԹԵՄԱ 16-ԲԴ.—

Ինչպե՛ս բանվորներն ու գյուղացիները տապալեցին ցարին.—

1905 թվի հեղափոխութեան պարտութեանը Հեղափոխական այլընտրանքումը: Յարիզմի ռեակցիոն քաղաքականութեանը: Բոլշևիկները պայքարը մարտական կուսակցութեան պահպանելու համար, մասսաներում հեղափոխական աշխատանք տանելու համար: Մենշևիկները դավաճանական քաղաքականութեանը, վորոնք ջանում եյին վերացնել բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցութեանը:

Լենայի կոտորածը 1912 թվին և հեղափոխական շարժման նոր հուժկու աճումը՝ բոլշևիկների դեկաւարութեամբ:

1914—18 թվականների իմպերիալիստական պատերազմը: Մենշևիկները ու 2-րդ Ինտերնացիոնալի դավաճանութեանը և վերջնականապես բուրժուազիայի բանակն անցնելը: Բոլշևիկների պայքարն՝ իմպերիալիստական պատերազմ քաղաքացիականի վերածելու և 3-րդ Ինտերնացիոնալ ստեղծելու համար:

Տնտեսական քայքայումն ու սովը յերկրում իմպերիալիստական պատերազմի հետևանքով: Կուսակցութեան աշխատանքը, հեղափոխական շարժման նոր աճումը: Փետրվարյան հեղափոխութեանը 1917 թվին և ցարիզմի տապալումը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

### ԹԵՄԱ 17-ԲԴ.

Ինչպե՛ս բանվորները նվաճեցին իշխանութեանը Հոկտեմբերին.—

Յերկու իշխանութեան ստեղծվելը Փետրվարյան Հեղափոխութեանից հետո.— բուրժուական Ժամանակավոր կառավարութեան և դրա հետ միասին խորհուրդներ, վորտեղ դերակշռում եյին մենշևիկներն ու ետերները: Ժամանակավոր կառավարութեան իմպերիալիստական քաղաքականութեանը:



նր: Համաձայնողականների աջակցությունը ժամանակավոր կառավարութեանը:

Բանվոր դասակարգի պայքարի լենինյան պլանը՝ գյուղական չքավորութեան հետ դաշնակցած՝ միջակի չեզոքացումով, կապիտալիստների, կալվածատերերի ու կուլակների տապալման համար: Բոլշևիկների պայքարն այդ պլանի համար ուղորտունիստանների դեմ:

Բոլշևիկների աշխատանքը մասսաների մեջ և մասսաների վրդովմունքի աճումն ընդդեմ ժամանակավոր կառավարութեան քաղաքականութեան: Հուլիսյան դեպքեր: Բոլշևիկների կողմից խորհուրդների մեծամասնութեան նվաճումը: Կուսակցութեան պայքարը զինված ապստամբութեան պատրաստման համար:

Հոկտեմբերյան ապստամբությունը Պետրոգրադում, և Լենինի ու Ստալինի գեղավար դերն այդ ապստամբութեան մեջ: Կապիտալիստների իշխանութեան տապալումը և մեր յերկրում պրոլետարական զիկտատուրա հաստատվելը: Բանկերի, Փարբիկների, գործարանների, յերկաթուղիների ազգայնացումը, կալվածատիրական հողի բռնագրավումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. ՄՏԱԼԻՆ.— Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան:
2. ՊՈՊՈՎ, Ն.— Ուրվագիծ Համկոմկուուսի պատմության. տրակ. 2-րդ, գլուխ 9-րդ:

ՀԱՏՎԱԾ IV. ՅԵՐԿՈՒ ՀՆԳԱՍՅԱԿ

ԹԵՄԱ 18-ՐԴ

Ինչպես բանվորներն ու աշխատավորները վերականգնեցին ժողովրդական տնտեսությունը:—

Հին Ռուսաստանի տնտեսութեան հետամնացությունը և նրա անհումն իմպերիալիստական պատերազմի հետեւանքով: Քաղաքացիական պատերազմը: Ռադամական կոմունիզմի քաղաքականութեան կիրառումը կուսակցութեան կողմից: Բանվոր դասակարգի ռադիալ-քաղաքական դաշինքը գյուղացիութեան հետ՝ միատեղ պաշտպանելու համար հեղափոխութեան նվաճումները կապիտալիստներից ու կալվածատերերից:

Քաղաքացիական պատերազմի վերջը և կուսակցութեան՝ ռադիական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականութեան անցնելը: ՆԵՊ-ը, վորպես քաղաքականութեան, վորը նկատի ունի սոցիալիզմի պայքարը կապիտալիստական տարրերի դեմ, սոցիալիզմի հաղթանակը: Սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի հիմունքները: Լենինյան «ով ում» հարցը: Սոցիալիստական ինդուստրացումը, վորպես «ով ում» հարցի լուծման բանալի՝ հոգուտ սոցիալիզմի, վորպես սոցիալիստական շինարարութեան լենինյան գլխավոր գծի հիմք: Լենինյան լոզունգը՝ «Հասնել տեխնիկական-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին և անցնել նրանցից»: Լենինի կոոպերատիվային պլանը, վորպես գյուղացիական մանր տնտեսութեան լսողոր, առաջավոր սոցիալիստական տնտեսութեան դարձնելու պլան:



Բանվոր դասակարգի ղեկավարութիւնը գյուղացիութեան նկատմամբ, բանվոր դասակարգի դաշինքը միջակի հետ, հենարանը չքաղութեան վրա, պայքարը կուլակի դեմ, վորպէս կուսակցութեան քաղաքականութեան հիմք գյուղացիութեան նկատմամբ սրբութարական զիկատաուրայի հաղթանակից հետո:

Կուսակցութեան պայքարը վերականգնման շրջանի տարիներում յենինյան քաղաքականութեան համար՝ տրոցկիզմի դեմ: Ժողովրդական տնտեսութեան արագ վերականգնումը նեպի հիման վրա և վերականգնման շրջանից վերակառուցման շրջանին անցնելը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Լենին.— Եկոնոմիկան ու քաղաքականութիւնը պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում: Ընտիր յերկեր, հատոր 4-րդ, էջ 323-331:

2. Լենին.— Կոոպերացիայի մասին: Ընտիր յերկեր, հատոր 5, էջ 303-309:

3. ՊՈՊՈՎ.— Ուրվագիծ Համկոմկուսի պատմութեան, պրակ 2-րդ, գլուխ 12 և 13:

#### ԹԵՄԱ 19-ՐԴ.—

Ինչպէս կուսակցութիւնն ու խորհրդային պետութիւնն առաջ տարան ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական վերակերտումը:—

Ժողովրդական տնտեսութեան վերականգնումից դեպի սոցիալիստական վերակառուցումն անցնելը: Կուսակցութեան 14-րդ համագումարը, վորպէս ինդուստրացման համագումար: Ընկ. Ստալինի

ղեկավարութեամբ կուսակցութեան պայքարը տրոցկիզմի դեմ: Տրոցկիզմի ջախջախումը, տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատ դառնալը:

Սոցիալիստական ինդուստրացման հաջողութիւնները, և գյուղատնտեսութեան հիմնական վերակառուցման սկիզբը: Կուսակցութեան 15-րդ համագումարը, վորպէս կոլեկտիվացման համագումար: Ընկ. Ստալինի գլխավորութեամբ կուսակցութեան դաժան պայքարն աջ ոսկրաունիզմի դեմ, վորը դարձել և կուսակցութեան մեջ դաշնակցութեամբ:

Առաջին հնգամյակի սկիզբը: Հնգամյակի խնդիրները: 1929 թիվը, վորպէս մեծ բեկման տարի: «Հնգամյակը չորս տարում» լոզունգը: Համալսարան կոլեկտիվացման սկիզբը և կուսակցութեան շրջադարձը կուլակութեան սահմանափակման քաղաքականութեանից, դեպի համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակութեան վորպէս դաժակարգի վերացումը: Կուսակցութեան պայքարը «ձախ» խոտորումների դեմ, կոլտնտեսային շինարարութեան մեջ:

ԽՍՀՄ սոցիալիզմի շրջանը թեվակոխելը: Կուսակցութեան 16-րդ համագումարը, վորպէս սոցիալիզմի ամբողջ ճակատով ծավալուն հարձակման համագումար: Ինդուստրացման, կոլեկտիվացման և կուլակութեան, վորպէս դասակարգի, վեցացման քաղաքականութեան հետագա հաջողութիւնները: Առաջին հնգամյակի յերրորդ տարում սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավար-



տումը: Լենինյան «ով ում» հարցի լուծումը, վոչ  
միայն քաղաքում, այլ և գյուղում, հոգուտ, սո-  
ցիալիզմի, և սեփական ինդուստրիալ բազա ստեղ-  
ծելն ամբողջ ժողովրդական տնտեսութեան վերա-  
կերտման համար: 17-րդ կուսկոնֆերանսը և նրա  
վորոշումները յերկրորդ հնդամյակի խնդիրները  
մասին: ԽՍՀՄ հատկապես ամրացվել և զարգաց-  
ման սոցիալիստական ճանապարհի վրա:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. 17-րդ կուսկոնֆերանսի բանաձևեր.—
2. ՄՍԱԼԻՆ.— Յերկրի ինդուստրացման և Համ-  
կոմկուտում աջ քեֆման մասին.
3. ՄՍԱԼԻՆ.— Մեծ բեկման տարի:
4. ՄՍԱԼԻՆ.— Կուլակուքյան, վորպես դաս-  
կարգի, վերացման քաղաքականութեան հարցի առ-  
թիվ:
5. Ստալին.— Քաղհաշվետվութեան Համկոմ-  
կուսի 16-րդ համագումարում. հատված 2-րդ:
6. Պոպով.— Ուրվագիծ Համկոմկուսի պատմու-  
թեան պրակ 2-րդ, գլուխ 14-րդ և 15-րդ:

### ԹԵՄԱ 20-ՐԴ.—

Առաջին հնգամյակի արդյունքները:

Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ սլենումի  
(1933 թվի հունվար) պատմական նշանակութեան,  
վորն ամփոփեց հնգամյակը չորս տարում կատա-  
րելու արդյունքները: Ընկ. Ստալինի զեկուցումն  
առաջին հնգամյակի արդյունքների մասին:

Հնգամյակի տարիներում ԽՍՀՄ ազրարային

յերկրից առաջավոր ինդուստրիալ յերկիր դարձնե-  
լը: Մեր հաղթանակները սոցիալիստական արդյու-  
նարբերութեան շինարարութեան մեջ (մեքենաշինու-  
թյուն, տրակտորային ու գյուղատնտեսական մե-  
քենաշինութեան, մետաղ, վառելյանյութ, էլեք-  
տրականութեան, քիմիա, ավիացիա):

Ծանր արդյունաբերութեան վիթխարի աճումը,  
հնգամյակի հետևանքով ԽՍՀՄ տնտեսական անկա-  
խութեան ապահովում, սեփական ինդուստրիալ բա-  
զա ստեղծելը՝ ամբողջ ժողովրդական տնտեսու-  
թեան վերակառուցման համար:

Կուլանտեսային իրավահարգի հաղթանակը  
ԽՍՀՄ-ում: Հնգամյակի հետևանքով, կուլտնտե-  
սութեանների ու խորհրդայնութեանների կողմից  
յերկրի բոլոր ցանքադաշտերի 80 տոկոսից ավելին  
ընդգրկելը, յերկրի վճարական ռաշոններում հիմնա-  
կանում կոլեկտիվացման, ավարտումը և այդ ռա-  
շոններում հիմնականում կուլակութեան, վորպես  
դասակարգի, վերացումը: ԽՍՀՄ աշխարհի ամենա-  
խոշոր սոցիալիստական հողագործութեան յերկիր  
դարձնելը: Գյուղատնտեսութեան զինավորումը  
հնգամյակի տարիներում առաջավոր մեքենայական  
տեխնիկայով, ստեղծելով ՄՏԿ հսկայական ցանց:  
Ցանքերի և հացի ու տեխնիկական մշակույթների  
աճումը հնգամյակի տարիներում: Կենդանաբու-  
ծութեանն առաջին հնգամյակի տարիներում: Ա-  
ռաջին հնգամյակի գյուղատնտեսութեան բնադավա-  
ռում տարած հաղթանակների համաշխարհային  
պատմական նշանակութեանը:

Առաջին հնգամյակի յերկու հիմնական նվա-



ճումը մասսաների նյութական ու հուշուրական բարելավման բնագավառում. դործազրկութեան վերացումը յերկրում և շերտավորման վոչնչացումն ըստ հուրակների ու չքավորների, աղքատութեան վոչնչացումը գյուղում: Թփեր ու փատոեր, վորոնք ցույց են տալիս աշխատավորների կյանքի ու կենցաղի բարելավումը գյուղում: Աշխատավարձի աճումը, սոց-ապահովադրման ծախքերի աճումը, 7-ժամյա բանվորական որ մտցնելը, հասարակական սննդի աճումը, բնակարանային շինարարութիւնը, և նոր քաղաքների շինարարութիւնը, մեքենաների ոգնութեամբ աշխատանքի բարելավումն ու հեշտացումը գյուղում, պետական ու հարսնատեսային առևվարի զարգացումը: Կուլտուրական հսկայական հաջողութիւնները հնգամյակի տարիներում:

Առաջին հնգամյակի քաղաքական արդյունքները: Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում:

«Քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերը ջախջախւած են, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը կառուցւած է, սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ մեջ ապահովւած է» (Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումի բանաձևվից):

Առաջին հնգամյակի հետևանքով նախադրյալներ ստեղծելը՝ վերացնելու համար դասակարգերը ու դասակարգային տարբերութիւնները ԽՍՀՄ մեջ:

Առաջին հնգամյակի միջազգային նշանակութիւնը: Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում, կապիտալի յերկրներում խորացող տնտեսական ճգնաժամի ֆոնի վրա, վորպես սոցիալիստական սիստեմի առավելութիւնների ցուցանիշը

կապիտալիզմի հանդէպ: Առաջին հնգամյակի հաջողութիւնները, հեղափոխական պայքարի համար վտտքի յեն հանում ամբողջ աշխարհի աշխատավորներին:

Հնգամյակի հետևանքով ԽՍՀՄ պաշտպանութեան վիթխորի ամրացումը: Յերկրի պաշտպանութեան և Կարմիր բանակի տեխնիկական սպառազինման համար բազա ստեղծելը: Կուսակցութեան ու բանվոր դասակարգի ղեկավար դերի վիթխարի ամրացումը, բանվոր դասակարգի դաշինքի ամրացումը աշխատավոր գյուղացիութեան հետ և դրա նշանակութիւնը յերկրի պաշտպանութեան համար:

Ընկ. Ստալինի գլխավորութեամբ՝ Կենտկոմի Լենինյան ղեկավարութիւնը, ամենադաժան պայքարը դասակարգային թշնամու ու նրա դործակալների դեմ, սպորտունիստների դեմ, աջ սպորտունիզմի, վորպես գլխավոր վտազի դեմ, — առաջին հնգամյակի հաղթանակների հիմքն են:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումի բանաձևվն առաջին հնգամյակի արդյունքների մասին.—

2. ՄՍԱԼԻՆ.— Առաջին հնգամյակի արդյունքները:— Ձեկուցում Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումում:

3. ՄՍԱԼԻՆ.— Գյուղի աշխատանքի մասին: Ճառ Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումում:

4. ՄՈԼՈՏՈՎ.— Ձեկուցումը 17-րդ կուսկոն-



Փերախուսի: Հատված 1-ին «Առաջին հնգամյակի արդյունքների առթիվ» և 4-րդ հատված՝ «Կապիտալիստական աշխարհը և յերկրորդ հնգամյակը»:

5. ՎՈՐՈՇԻԼՈՎ.— Առաջին հնգամյակի արդյունքների մասին: Ձեկուցում Մոսկվայի կայսրոսկի կուսակալի մասին, հատված՝ «Հնգամյակն, ամբողջեց իՍՏՄ պաշտպանությունը»:

ԹԵՄԱ 21-ՐԴ.—

Յերկրորդ հնգամյակի խնդիրները.—

Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրն է՝ «Վերջնականապես վերացնել կապիտալիստական տարրերը և ընդհանրապես դասակարգերը, յիսովին վոչնչացնել դասակարգային տարբերություններ ու շահագործում առաջացնող պատճառները և հաղթահարել կապիտալիզմի մնացորդները եկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ, դարձնել յերկրի ամբողջ աշխատավոր ընակչությանը սոցիալիստական անդասակարգ հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողներ» (17-րդ կուսկոնֆերանսի բանաձևից): Այս խնդրի համաշխարհային պատմական նշանակությունը:

Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդրի իրագործումը հնարավոր է միայն ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման հետագա բուլճեիկյան աշխատանքի հիման վրա: Ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը, վորպես յերկրորդ հնգամյակի հիմնական տնտեսական խնդիր: «Յերկրորդ հնգամյակը կլինի առավելապես

նոր ձեռնարկությունների յուրացման հնգամյակ արդյունաբերության մեջ, նոր ձեռնարկությունների կազմակերպչական ամբացման հնգամյակ գյուղատնտեսության մեջ, վորն, իհարկե, չի բացասում, այլ յենթադրում է նոր շինարարության հետագա զարգացումը» (Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումի բանաձևվից):

Դաժան պայքարը ջախջախված, բայց տակավին չվոչնչացված, կուլակության ու նրա ազենտուրայի ոպորտունիստների դեմ, — աջ թեքման դեմ, վորպես գլխավոր վտանգի, — առաջին յերաշխիքն է յերկրորդ հնգամյակի մեծագույն պլանի իրագործման համար: Դասակարգային թշնամու պայքարի առանձնահատկությունները սոցիալիզմի հաղթական հարձակման դեմ յերկրորդ հնգամյակի տարիներում: Դասակարգային թշնամու փորձերի ուժեղացումը՝ ջլատելու հանրային սոցիալիստական սեփականությունը՝ խորհրդային իրակակարգի հիմքը: Հեղափոխական դասակարգային խոր աչալրջության անհրաժեշտությունը: Պայքարը՝ լրիվ ու ժամանակին կոլտնտեսությունների կողմից պետության հանդեպ իրենց պարտավորությունների կատարման համար, սրբազան և անձեռնմխելի հանրային սոցիալիստական սեփականության պահպանությունը, սոցիալիստական աշխատանքային կարգապահության ամբացումը, շահագործող տարրերի վերջնական վոչնչացման, լայն աշխատավոր խավերի վերադաստիարակման և յերկրորդ հնգամյակի տնտեսական պլանի կատարման յերաշխիքն են:



Պրոլետարական պետութեան և կուսակցութեան ղեկավար դերի ամեն կերպ ամրացման անհրաժեշտութիւնը, ամենազաժան պայքարը բոլոր գույնի սպորտունիստների դեմ, աջ թեքման դեմ, վորպես գլխավոր վտանգի, հաշտվողականների ու յերկերեսանիների դեմ: Կուսակցութեան 1933 թվի գլխավոր գտման նշանակութիւնը կուսակցական շարքերի ամրացման համար: ՄՏԿ, խորհրդատեսութիւնների, յերկաթուղիների, քաղաքացիական ուղային նավտորմի և այլ քաղրաժինները, վորպես կուսակցական ղեկավարութեան ամրացման լծակներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. ՄՏԱԼԻՆ.— Առաջին հնգամյակի արդյունքները: Զեկուցում Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումում. հատված 7-րդ:

2. ՄՈԼՈՏՈՎ.— Զեկուցում 17-րդ Կուսկոմֆերանսում. հատված 2-րդ «Յերկրորդ հնգամյակի քաղաքական խնդրադրումը»:

## ՀԱՏՎԱԾ V

### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 22-ԲԴ.—

Սոցիալիստական արդյունաբերութիւնը յերկրորդ հնգամյակում.—

Յերկրորդ հնգամյակը, վորպես առավելապես նոր ձեռնարկութիւնների ու նոր տեխնիկայի յուրացման հնգամյակ: Այս խնդրի կարեւորութիւնը

և արդյունաբերական արտադրանքի աճման աւելավարագացրած տեմպերի անհրաժեշտութիւնը յերկրորդ հնգամյակում, առնվազն առաջին յերկու կամ յերեք տարվա ընթացքում:

«Խոլշեիկները պետք է տիրապետեն տեխնիկային» ընկ. Ստալինի լողունդի նշանակութիւնը յերկրորդ հնգամյակի իրադրծման համար:

Յերկրորդ հնգամյակում աշխատանքի արտադրողականութեան բարձրացման համար,—վորակի բարելավման համար և արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար պայքարի խնդիրները: Պայքարը ձեռնարկութիւններում աշխատանքի բարձր կարողասանութեան համար: Կառավարութեան որենքները պրոգուլի դեմ պայքարի մասին, բանվորական մատակարարման մասին: Արհմիութիւնների դերն ու խնդիրները:

Յերկրորդ հնգամյակում սոցիալիստական արդյունաբերութեան կարեւորագույն ճյուղերի (մեքենաշինութիւն, էլեքտրոններդիա, մետաղ, քիմիա, թեթեւ ու սննդամթերային արդյունաբերութիւն) և տրանսպորտի զարգացման խնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումի բանաձևը, առաջին հնգամյակի արդյունքների մասին:

2. ՄՏԱԼԻՆ.— Առաջին հնգամյակի արդյունքները: Զեկուցում Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ-ի 1933 թվի հունվարյան պլենումում. հատված 3-րդ:

3. ՄՈԼՈՏՈՎ.— Յերկրորդ հնգամյակի առաջին



տարվա խնդիրները: Զեկուցում 1933 թվի Համ-  
կումկուսի կենտրոնի ու ԿՎՀ հունվարյան պլենու-  
մում. ներածական և հատված 1-ին:

4. ՄՈՒՈՏՈՎ.— Զեկուցում 17-րդ Կուսկոնֆե-  
րանսում. հատված 3-րդ «Տեխնիկական վերակա-  
ռուցումն ու բուլչեիկյան տեմպերը»:

### ԹԵՄԱ 23-ԲԴ

Ընկ. Ստալինի վեց պայմանները.—

Ընկ. Ստալինի վեց պայմանները, վորպես բա-  
նալի բարձրացնելու համար աշխատանքի արտա-  
դրողականութունը և հաղթահարելու համար մեր  
աշխատանքի բոլոր թերութունները սոցիալիստա-  
կան շինարարության բնագավառում: Ընկ. Ստալի-  
նի վեց պայմանները. 1) Արդյունաբերության  
կազմակերպված սպահովումը բանվորական ուժով՝  
կոլտնտեսութունների հետ արդյունաբերության  
միավորների պայմանագրերի և աշխատանքի մեքե-  
նայացումը. 2) Հավասարեցման վերացումն աշխա-  
տավարձում և բանվորների նյութական ու կուլտու-  
րակի մակարդակի բարելավումը: 3) Դիմազրկու-  
թյան վոչնչացումը. 4) Պրոլետարական տեխնիկա-  
կան կազրեր ստեղծելը. 5) Տեխնիկական հին կազ-  
րերի ալիելի համարձակ ոգտազործումը, դեպի  
նրանց ունեցած վերաբերմունքի փոխելը: 6) Տընտ-  
հաշվարքի կիրառումը և աշխատանքը նոր ձեվով:

Փաստեր, վորոնք ցույց են տալի, թե ինչպես է  
ընթանում աշխատանքն ընկ. Ստալինի վեց պայ-  
մանների իրագործման համար. Փաբրիկաների, գոր-

ծարանների աշխատանքներում: Ընկ Ստալինի 6  
պայմանները խորհտնտեսութունների ու ՄՏԿ աշ-  
խատանքում:

Ընկ. Ստալինի վեց պայմանների անշեղ կիրա-  
ռումն ոպորտունիսաների դեմ մղած դաժան պայ-  
քարի հիման վրա, վորպես գրավական յերկրորդ  
հնգամյակի կատարման:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. ՍՏԱԼԻՆ.— Նոր պարագա, տնտեսական շի-  
նարարության նոր խնդիրներ:

2. Համկումկուսի կենտրոնի ու ժողկոմխորիի  
վորոշումը Գոնբասի վերաբերյալ: (1933 թվի  
ապրիլի 8-ին):

3. Համկումկուսի կենտրոնի ու ժողկոմխորիի  
վորոշումը յերակաթուղային տրանսպորտի մասին  
(1933 թվի հուլիսի 3-ին):

### ԹԵՄԱ 24-ԲԴ.—

Գյուղատնտեսությունը յերկրորդ հնգամյա-  
կում.—

Յերկրորդ հնգամյակն առավելապես կոլտնտե-  
սութունների ու խորհտնտեսութունների քաղա-  
քական ու կազմակերպչական ամրացման հնգա-  
մյակ է:

Պայքարը բերքատվության բարձրացման հա-  
մար, գյուղատնտեսական արտադրության վորակի  
համար, յերկրորդ հնգամյակի կարելվորագույն  
խնդիրն է: Գյուղատնտեսության հետագա մեքենա-  
տրակտորային կայաններով ընդգրկումը:



Յերկրորդ Հնգամյակը կոլտնտեսային մասսաների կուլտուրական ու նյութական մակարդակի հսկայական բարձրացման Հնգամյակ է: Ընկ. Ստալինի առաջադրած խնդիրն է՝ մոտակա յերկու-յերեք տարում բոլոր կոլտնտեսականներին ունեւոր դարձնել:

Կոլտնտեսությունները բոլշևիկյան կոլտնտեսություններ դարձնելու խնդիրը, վորպես կենտրոնական խնդիր: Մմենադաժան պայքարի անհրաժեշտությունը կուլակուլթյան մնացորդների և ուրբատունիքի դեմ: Կոլտնտեսային սոցիալիստական սեփականության պահպանումը, կոլտնտեսականների աղնիվ աշխատանքը, պայքարը լողրների ու յենթակուլակների դեմ, պետության հանդեպ կոլտնտեսությունների իրենց պարտավորությունների լրիվ ու ժամանակին կատարումը, — ահա բանալին՝ սոցիալիստական դյուղատնտեսության մեջ հասնելու համար հետագա վիթխարի հաջողությունների:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Ստալին.— Առաջին հնգամյակի արդյունքները: Ձեկուցում Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումում, հատված 4-րդ:

2. ՄՈՒՂՏՈՎ.— Յերկրորդ հնգամյակի առաջին տարվա խնդիրները: Ձեկուցում Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումում, հատված 2-րդ:

3. ԿՄԿԱՆՈՎԻԶ.— կոլտնտեսությունների ամրացումը և գանաճացանի խնդիրները: Ձեկուցում հար-

վածային կոլտնտեսականների համագումարում, հատված 1-ին ու 2-րդ:

#### ԹԵՄԱ 25-ՐԴ

Պայքարը բերքատվության համար.—

Դաշտերի բերքատվության բարձրացումը, վորպես դյուղատնտեսության արտադրության հիմնական խնդիրը: Պայքարը բերքատվության համար, պայքար է դասակարգային թշնամու դեմ: Կուսակցության ու կառավարության վորոշումները բերքատվության բարձրացման մասին: Բերքատվության հիւնդ լծակները. 1) պայմանադրային (կոնորակտացիոն) դյուլթյուն ունեցող սիստեմի փոխարինումը պետությանը հացահատիկի պարտադիր հանձնումով. 2) պարտադիր ցանքափոխության մտցնելը. 3) բոլոր կոլտնտեսությունների ու մեխատնտեսների կողմից ազրոմինիմումի պարտադիր պահպանումը դյուղատնտեսութան մեջ. 4) տեսակավոր սերմացուի տարածումը. 5) կոլտնտեսություններում բրիգադների ճիշտ կազմակերպումը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Համկոմկուսի Կենտկոմի ու Ժողկոմխորի վորոշումը բերքատվության բարձրացման մասին (1932 թվի սեպտեմբերի 29-ին):

2. Համկոմկուսի Կենտկոմի ու Ժողկոմխորի վորոշումը ցելի ու բերքահավաքի կազմակերպման մասին (1933 թվի մայիսի 24-ին):

3. ՍՏԱԼԻՆ.— շատը հարվածային կոլտնտե-



սականների, առաջին Համամիութենական համագումարում:

4. ԿՍԳՄՆՈՎԻԶ.— Կոլտնտեսությունների ամբարցումը և գարնանացանի խնդիրները:— Ձեկուցում Հարվածային կոլտնտեսականների համագումարում. հատված 3-րդ:

5. ՅԱԿՈՎԼԵՎ.— Կոլտնտեսությունների ամբարցման մասին: Ձեկուցում ԽՍՀՄ Կենտգործկոմմի 3-րդ նստաշրջանում, հատված 5-րդ:

ԹԵՄՍ. 26-ԲԴ.—

Կոլտնտեսային արտադրության կազմակերպման խնդիրները.—

Արտելը կոլտնտեսությունների հիմնական ձևն է: Արտելի զարգացումն ու ամրացումը, վորպես կարեվորագույն խնդիր կոլտնտեսային շինարարության մեջ:

Հաստատուն աշխատանքային կարգապահություն սահմանելը: Ազդեցության միջոցները հասարակական կարգապահության խախտողների նկատմամբ, կոլտնտեսություններում լողերների ու ծուլերի նկատմամբ: Պայքարը յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի ու վորակի և ընդհանուր յեկամուտում նրա ունեցած բաժնի ամենախիստ վերահսկողության համար, կոլտնտեսությունների գույքի ու արտադրանքի հաշվառման համար: Աշխատանքային կարգապահության ամրացումը կարեվորագույն պայման է կուլակուլթյան դեմ պայքարի և կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման համար:

Կոլտնտեսություններում արտադրական բրիգադ ստեղծելն ու ամրացնելն աշխատանքի կենտրոնական խնդիր է կոլտնտեսություններում: Բրիգադի կազմակերպման կարգը, բրիգադի կազմը, բրիգադապլաների ընտրանքը, բրիգադի ամրացումը ցանքափոխության ամբողջ շրջանում, ցանքափոխության դաշտերին:

Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումը և կոլտնտեսային կենդանարուծության զարգացման խնդիրները: Կուլակցության ու կառավարության վորոշումը կոլտնտեսականներին կովեր ձեռք բերելու գործում: Երկուսակամային: Լճկանը կոլտնտեսությունում, նրա խնամքը, պայքարը կուլակային վնասարարության դեմ:

Տեխնիկայի տիրապետման ու նրա խնամման խնդիրները: Պայքարը տեխնիկայի նկատմամբ կուլակային վնասարարության դեմ:

Պայքարն ամուր կոլտնտեսային կադրերի համար: Կոլտնտեսային կադրերի պատրաստությունը: Կուլակցության ու կառավարության վորոշումները կոլտնտեսությունների համար կադրերի ընտրանքի ու պատրաստության մասին:

Կոլտնտեսային առեվտուրը և նրա հավաքման խնդիրները: Կոլտնտեսային արտադրության կադրակերպումը դասակարգային պայքարի կարեվորագույն բնագավառը: Պայքարը կոլտնտեսությունների կողմից պետության հանդեպ իրենց պարտավորությունների լրիվ ու ժամանակին կատարման համար:



1. Ընդ. ՄՏԱԼԻՆ.— Առաջին հնգամյակի արդյունքները.— Ձեկուցում Համկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումում, հատված 4-րդ: Չառք գյուղի աշխատանքի մասին հատվածներ 2-րդ և 4-րդ:

2. ԿԱԳԱՆՈՎԻԶ.— Կոլտնտեսությունների ամրացումը և գարնանացանի խնդիրները: Ձեկուցում հարվածային կոլտնտեսականների համագումարում:

3. [redacted].— Կոլտնտեսությունների ամրացման մասին:— Ձեկուցում ու յեզրափակման խոսքը [redacted]

4. [redacted].— Կոլտնտեսությունների ամրացումը և գարնանացանի խնդիրները: [redacted]

5. «Բերքահավաքի հացի հանձնման ու մթերումների մասին», վորոշումների ժողովածու. հրատարակութուն Լենինգրադի կուսհրատի, 1933 թ.:

ԹԵՄԱ. 27-րդ.—

ՄՏԿ ու խորհտնտեսություններ.—

ՄՏԿ ու խորհտնտեսությունների դերը, վորպես սոցիալիստական ձևով գյուղատնտեսության վերակառուցման ամենադիսավոր լծակների:

Կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումի վորոշումները ՄՏԿ ու խորհտնտեսու-

թյունների քաղբածիններ ստեղծելու մասին: ՄՏԿ ու խորհտնտեսությունների քաղբածինների դերը կոլտնտեսությունները բուլչեիկյան կոլտնտեսություններ դարձնելու, կոլտնտեսությունների մեծամասնությունը նվաճելու, կոլտնտեսային ակտիվ հայտարերելու և համախմբելու գործում: Աշխատանքը կանանց մեջ և կանանց կոլտնտեսային ակտիվ աշխատանքի ներգրավումը:

Պայմանագրի նոր կարգը կոլտնտեսությունների ու ՄՏԿ միջև: ՄՏԿ պարտավորությունները կոլտնտեսությունների հանդեպ և կոլտնտեսությունների պարտավորությունները ՄՏԿ հանդեպ: Կոլտնտեսությունների պարտավորություննե՝ ժամանակին ու լիովին բնավարձով վճարել ՄՏԿ աշխատանքը:

Խորհտնտեսային արտադրության կազմակերպման ամենադիսավոր խնդիրները: Պայքարը՝ Ստալինի վեց պայմանների կատարման համար, Խորհտնտեսությունների աշխատանքում, աշխատանքային կարգապահության համար: Ամենավճռական պայքարի անհրաժեշտությունը խորհտնտեսությունների աշխատանքում բուրժուական խեղաթյուրումների դեմ, խորհտնտեսությունների կողմից պետական պլանների և առաջադրությունների լրիվ կատարման համար:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Համկոմկուսի կենտկոմի ու ԿՎԻ 1933 թվի հունվարյան պլենումի բանաձևը ՄՏԿ ու խոքիտնտեսութունների ֆադրաժիմների նպատակների ու խնդիրների մասին:

2. ԿԱԳԱՆՈՎԻՉ.—ՄՏԿ ու խոքիտնտեսութունների ֆադրաժիմների աշխատանքի մասին: Զեկուցում Համկոմկուսի կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումում:

3. ԿՈՒՅԲԻՇԵՎ.— Զեկուցում Համկոմկուսի կենտկոմի ու ԿՎՀ 1933 թվի հունվարյան պլենումում հատված «Գյուղատնտեսութուն»:

4. [Redacted].—Կոլտնտեսութունների ամրացումը և գարնանացանի խնդիրները: Զեկուցում հարվածային կոլտնտեսականների համագումարում. հատված 7-րդ:

ՀԱՏՎԱԾ V

ԿՈՒՍԱՎՅՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴՅՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳՅՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ. 28-րդ.—

Ազգային հարցը ցարական Ռուսաստանում:— Յարական Ռուսաստանը «ժողովուրդների բանտեր»: Ազգային հարցը կապիտալիստական յերկրներում, —ազգությունների հարստահարումը կապիտալի յերկրներում ու զաղութներում:

Կուսակցության ու խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը: ԽՍՀՄ ազգային քաղաքականության հաջողությունները: Առաջ-

ներում հարստահարած ազգությունների, ամեն կերպ տնտեսական քաղաքական ու կուլտուրական ողնությունը՝ վոչնչացնելու համար անհավասարությունն ազգությունների միջև:

Նվաճումներն ազգային հանրապետությունների ինդուստրացման բնազավառում: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հաջողություններն ազգային հանրապետություններում: Զևով ազգային բովանդակությամբ պրոլետարական կուլտուրայի արագ աճումը ԽՍՀՄ ժողովուրդների մեջ: Պայքարի հաջողությունները հին մնացորդների դեմ (կրոնական, կենցաղային սոաջներում հարստահարված ազգությունների մեջ:

Սոցիալիստական շինարարության ու կուլտուրական վերելքի խնդիրներն ազգային հանրապետություններում ու մարզերում յերկրորդ հնգամյակում:

Բանվորական պետության ու կուսակցության պայքարը Լենինյան ազգային քաղաքականության համար դասակարգային թշնամու դեմ՝ մեծապետական չովինիստների ու տեղական նացիոնալիստների դեմ: Գոսակարգային պայքարի սրումը ժամանակակից ետապում և հակահեղափոխական չովինիստական ու թեղադուր գոսակարգային թշնամու կողմից: Անտիսեմիտիզմն ու նրա դասակարգային եյությունը: Կուսակցության պայքարը թեքումների դեմ ազգային հարցում սևփական յարբերում: Թեքումը դեպի մեծապետական չովինիզմը, վորպես գլխավոր վտանգ:



Ազգային հանրապետութիւնների ողջախիտ-  
տական շինարարութեան հաջողութիւնների հա-  
մաշխարհային նշանակութիւնը:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—**

1. ԱՏԱԼԻՆ.— «Հոկտեմբերյան հեղաշրջումը  
և ազգային եարցը» և «Հոկտեմբերյան հեղաշր-  
ջումը և ազգային քաղաքականութիւնը ու-  
սանքան կոմունիստների մոտ»: «Հոկտեմբերյան  
հեղափոխութեան մասին» ժողովածու:

2. ԱՏԱԼԻՆ.— Արևելքի ժողովուրդների հա-  
մարաբանի քաղաքական խնդիրների մասին:

3. ԱՏԱԼԻՆ.— Քաղաքացիական Համար-  
կուսի 16-րդ եամագումարում, հասկած 3-րդ և  
յեզրափակման խոսք:

**ՀԱՏՎԱԾ VII.**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԵՂԱՓՈՒԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՍԸ ՅԵՎ**

**ԽՍՅՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԹԵՄԱ 29-րդ.—

Ինչպիսի առաջացավ կոմիստները.—

Բանվոր պտտակարգի պայքարի միջազգային  
բնույթը: Մարքսն ու Ենգելսը բանվորների միջազ-  
գային միասնորման հիմնադիրներն են: Մարքսի  
ու Ենգելսի լոյունգը՝ «Պրոլետարներ բոլոր յերկը-  
ները», միացնէ»: Մարքսը 1-ին Ինտերնացիոնալի  
առաջնորդ է, մարքս հիմք դրեց սոցիալիզմի հա-  
մար պրոլետարական միջազգային պայքարին:

1-ին Ինտերնացիոնալի հեղափոխական պան-

ծալի տրադիցիաները: Փարիզի կոմունան ու նը-  
րա նշանակութիւնը:

2-րդ Ինտերնացիոնալի կազմակերպումը և նը-  
րա դերը բանվորական մասսայական շարժումը  
լայն ծավալելու համար հողի պատրաստման գոր-  
ծում: Ոպորտունիզմը 2-րդ Ինտերնացիոնալում:  
Իմպերիալիզմի շրջանի առաջանալը: Բոլոր իմպե-  
րիատական յերկրներում կապիտալիստների կողմից  
կաշառված բանվորների խավեր առաջանալը: 2-  
Ինտերնացիոնալի անցումը բուրժուազիայի կողմը:  
1914 թվի իմպերիալիստական պատերազմը և 2-րդ  
Ինտերնացիոնալի քայքայումը:

Լենինի գլխավորութեամբ բոլշևիկների ան-  
հաշտ պայքարը 2-րդ Ինտերնացիոնալի մեջ յե-  
ղած ոպորտունիզմի դեմ: 2-րդ Ինտերնացիոնալի  
սնանկացումը իմպերիալիստական պատերազմի սրկը  
բից և Լենինյան ու բոլշևիկների համառ աշխատան-  
քը հեղափոխական 3-րդ Ինտերնացիոնալ ստեղծե-  
լու համար:

Կոմունիստական Ինտերնացիոնալի 1-ին կոնգ-  
րեսը 1919 թվին: Կոմիստները 1-ին Ինտերնացիո-  
նալի պանծալի գործի շարունակողն է: Համկոմկու-  
սի փորձը, վորպես հիմք Կոմիստներն շինարարու-  
թեան ու պայքարի համար: Կոմիստներն բոլշևի-  
կացման խնդիրները: Լենինն ու Ստալինը Կոմիս-  
տներն առաջնորդներն են:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—**

1. ԼԵՆԻՆ.— Կոմունայի հիշատակին, — յերկ.  
ժող. հրատ. 2-ու3, հատ 15, էջ 152:



2. ԼԵՆԻՆ.—3-րդ Ինտերնացիոնալն ու նրա տեղը պատմութեան մեջ: Ընտիր յերկեր հատոր 5-րդ, էջ 396-402:

ՄՈՆՈՍՈՎ Ս.—Ակնարկներ հեղափոխութեան շարժման պատմութեանից:—գլուխ 7:

ԹԵՄԱ 30-րդ.—

Հետպատերազմյան կապիտալիզմ.—

Հետպատերազմյան կապիտալիզմի ընդհանուր քայքայումն ու ճգնաժամը: Պատերազմի ու Հոկտեմբերյան հեղափոխութեան հետևանքով աշխարհը յերկու բանակի բաժանվելը, — կործանվող կապիտալիզմի բանակ և հաղթանակող սոցիալիզմի բանակ: Հակասութիւնը ԽՍՀՄ ու կապիտալիստական աշխարհի միջև ժամանակակից շրջանի գլխավոր հակասութիւնն է:

Համառոտ տեղեկութիւններ հետպատերազմյան կապիտալիզմի զարգացման 3 շրջանների մասին: Հեղափոխական գրոհի շրջանը կապիտալիստական ստաբիլիզացիայի խախտման ու վախճանի շրջան է:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, կապիտալիստական յերկրների միջև նախկին համաձայնութիւնների խախտումը և հակասութիւնների աճումը: Հեղափոխական շարժման հուժկու աճումը: Կապիտալիստական ստաբիլիզացիայի վախճանը հեղափոխութիւնների ու պատերազմների նոր տուրի տեղի ունեցող անցումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Կոմիստերնի գործկոմի 12-րդ պլենումի քեզիտները, միջազգային գրութեան և կոմիստերնի սեկցիաների խնդիրների մասին՝ ընկ կուուսինենի գեկուցման առթիվ:

2. ՍՏԱԼԻՆ.—Քաղաշովետութիւնը Համկոմկուսի 16-րդ համագումարում, հատված 1-ին:

3. ԼԵՆԻՆՏԵՎ Ա.—Քաղաքական տնտեսութեան նախնական դասընթաց: Մաս 1-ին. գլուխ 10 և 11:

ԹԵՄԱ 31-րդ.—

Աշխատավորների հեղափոխական պայքարը կապիտալի յերկրներում.—

Տնտեսական ճգնաժամի հետևանքները բանավորների և աշխատավոր գյուղացիների համար, բանավոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութեան պայքարը կապիտալի յերկրներում, ճգնաժամից հեղափոխական յելքի համար:

Բուրժուազիայի պայքարի յերկու յեղանակը հեղափոխական աճող շարժման դեմ՝ բռնութիւնն ու խարեյութիւն: Ֆաշիզմն ու սոցիալ-ֆաշիզմը բուրժուազիայի յերկու ձեռքերն են: Բուրժուական պետութիւնների ֆաշիստացումը, վորպես իտրատակվող կապիտալիզմի վերջին հույս: Դրութիւնը Գերմանիայում, Լեհաստանում, Իսպանիայում և կապիտալիստական այլ յերկրներում:

Կոմկուսակցութիւնների խնդիրները բուրժուազիայի դեմ իշխանութեան համար՝ գալիք մարտերի պատրաստութեան մեջ: Պայքարը բանավոր դասակարգի մեծամասնութեան նվաճման համար,



վորպես վճռական խնդիր: Միասնական ճակատի տակտիկան: Աշխատանքն արհմիություններում: Աշխատանքը գյուղացիության մեջ: Կոմկուսակցությունների անհաշտ պայքարը հակահեղափոխական տրոցկիզմի և իրենց շարքերում սպորտունիզմի դեմ, աջերի դեմ՝ վորպես գլխավոր վտանգի Կոմինտերնի մարտական կորովի յերաշխիքն է:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Կոմինտերնի գործկումի 12-րդ պլենումի բանաձևը տնտեսական գործադուլների դադարների և գործազուրկների պայքարի մասին: Ընկ. Թեյմանի գեկուցման և ընկ. ընկ. Լեմսկու և Հոտվալդի հարակից գեկուցումների առթիվ:

2. ՄՏԱԼԻՆ.— Սոաջին հնգամյակի արդյունքները:— Ձեկուցում Համկոմկուսի Կենտկոմի ու ԿԿՀ 1933 թվի հունվարյան պլենումում հատված 5-րդ:

3. ՄԱՆՈՒԻԼՍԿԻ.— Ձեկուցում Մոսկվայի կուսակցության 1933 թվի հոկտեմբերի 21-ին:

### ԹԵՄԱ 32 -րդ.—

Աշխատավորների հեղափոխական պայքարը գաղութներում.—

Գաղութների ու կախյալ յերկրների աշխատավորների կեղեքումը՝ իմպերալիստների՝ տեղական բուրժուազիայի և կալվածատերերի կողմից: Գաղութների ու կիսագաղութների աշխատավորների ազգային ազատագրական պայքարը: Պրոլետարիատը, վորպես միակ զասակարգ, վոր ընդունակ է ապահովելու գաղութների ու կախյալ յերկր

ների աշխատավորների իսկական ազատագրումը կեղեքումից ու շահագործումից: Սոցիալ-Ֆաշիստների դավաճանական դերը գաղութների աշխատավորների պայքարում:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և հեղափոխական վերելքի աճումը գաղութներում. Չինական հեղափոխությունը և նրա նշանակությունը գաղութների աշխատավորների հեղափոխական պայքարի համար: Չինաստանի խորհրդային ռայոնները: Չինական Կարմիր բանակը: Հեղափոխական պայքարը Հնդկաստանում: Կոմկուսակցությունները գաղութային յերկրներում, նրանց դըլխավոր խնդիրները:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. ՄՏԱԼԻՆ.— Քաղիաշվետու ԽՍՀՄ-ում Համկոմկուսի 16-րդ համագումարում. հատված 1-ին, «Կապիտալիզմի հակասությունների սրումը»:

### ԹԵՄԱ 33-րդ.—

Նոր իմպերալիստական պատերազմների պատրաստու թյուն.—

Պատերազմների անխուսափելիությունն իմպերիալիզմի որոք:

Հակասությունների սրումը կապիտալիստական աշխարհում ճգնաժամի առթիվ ու կապիտալիզմի կայունացման վախճանի առթիվ, և պատերազմի վտանգի հակայական աճումը: Հիմնական հակասություններն իմպերալիստների միջև պայքարն Անգլիայի և Ամերիկայի միջև, Գերմանիայի պայքարը Վերսալյան դաշնագրի արդյունքների վերաց



ման համար, Ամերիկայի ու Յապոնիայի պայքարը ինչպես որիկյանոսում տիրապետելու համար և այլն) :

Իմպերալիստների պատերազմները զաղուխներում, պայքարը Չինաստանի նոր բաժանման համար: Իմպերալիստների կողմից ԽՍՀՄ դեմ ինտերվենցիայի ուժեղ պատրաստութիւնը:

Թվեր ու փաստեր իմպերալիստների սպառազինման մասին: Զինաթափման կոնֆերանսների իսկական իմաստը, վորպես վարազույցներ, վորոնք քողարկում են նոր պատերազմների պատրաստութիւնը:

2-րդ սոցիալ-Ֆաշիստական ինտերնացիոնալը բուրժուազիայի գլխավոր ոգնականն է պատերազմների և ինտերվենցիայի պատրաստութիւնի գործում:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. Կոմիստերնի Գործկոմի 12-րդ պլենումի քեզիսները, միջուգայիմ դրության և Կոմիսարիսի սեկցիաների խնդիրների մասին ընկ. Կուուսիսնի գեկուցման առքիվ. 2-րդ հատված:

2. Կոմիստերնի Գործկոմի 12-րդ պլենումի բանաձևը հեռավոր արևելյան պատերազմի և կոմունիստների խնդիրների մասին, իմպերալիստական պատերազմի և ԽՍՀՄ վրա ինտերվենցիայի դեմ մղած պայքարում ընկ. Ոկանոյի գեկուցման առքիվ:

3. Կուուսիսնի. Զեկուցում Կոմիստերնի գործ-

կոմի 12-րդ պլենումում, հատված 2-րդ «Պատերազմի վտանգի և նրա դեմ պայքարի մասին»:

### ԹԵՄԱ 34-րդ.—

ԽՍՀՄ կապիտալիստական շրջապատման մեջ.

Խորհրդային իշխանութիւնն արտաքին քաղաքականութիւնի հիմքը խաղաղութիւնն քաղաքականութիւնն է:

Կապիտալիստական յերկրների յերկու տենդենցը ԽՍՀՄ հարաբերութիւններում: ԽՍՀՄ դեմ ինտերվենցիայի պատրաստութիւնն նախկին պլանները և նրա ձախողման պատճառները: Կապիտալիստական ստաբիլիզացիայի վախճանը և հակահեղափոխական պատերազմի ու ԽՍՀՄ դեմ ինտերվենցիայի վտանգի ուժեղացումը: Փաստեր, վորոնք վկայում են այդ մասին: Անգլիայի, Յապոնիայի վկայում են այդ մասին: Սոցիալ-Ֆաշիստները, մի պատրաստութիւն մեջ: Սոցիալ-Ֆաշիստները, կոմիստերնից վտարված աջ ուղորտունիստները և հակահեղափոխական արոցկիստներն իմպերալիստների հենարանն են ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստութիւնի գործում:

ԽՍՀՄ անշեղորեն շարունակում է խաղաղութիւնն քաղաքականութիւնը և ամեն կերպ ամրացնում է իր պաշտպանունակութիւնն ու կորովը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

1. ՍՏԱԼԻՆ.—Քաղաքացիական պայքարում, հատված 3-րդ «Հարաբերութիւնները ԽՍՀՄ ու կապիտալիստական պետութիւնների միջև»:



2. ՄՈՒՆՏՈՎ.— 17-րդ կուսկոնֆերանսի բացման օրը:

3. ՄՈՒՆՏՈՎ.— Խորհրդային իշխանությունն ու հարվածային կոլտնտեսությունների խնդիրները: *Զեկուցում հարվածային կոլտնտեսականների 1-ին համամիութենական համագումարում հատված 4-րդ:*

4. ՌԿԱՆՈ.— Զեկուցում կոմիտեերնի Գործկոմի 12-րդ պլենումում: *Պլենումի սղազիր հաշվետվությունը, մաս 3-րդ:*

ԹԵՄԱ 35-րդ.—

Կոմիտեերնի պայքարը պատերազմների և ինտերվենցիայի դեմ.—

Իմպերիալիստական ազդային-ազատազրական ու հեղափոխական դասակարգային պատերազմներ, պրոլետարատի վերաբերմունքը դեպի զանազան տեսակի պատերազմները: Վճռական պայքարի անհրաժեշտությունը պացիֆիզմի ու սոցիալ-ֆաշիզմի դեմ:

ԽՍՀՄ համաշխարհային պրոլետարիատի հայրենիքն է: ԽՍՀՄ պաշտպանությունը կոմունիստական ինտերնացիոնալի ու նրա բոլոր կուսակցությունների առաջնակարգ խնդիրն է:

Կոմիտեերնն ու կապիտալիստական յերկրների կոմունիստական կուսակցությունները պատերազմի ու ռազմական վտանգի դեմ պայքարում: Փաստեր յեղբայրական կոմկուսակցությունների հակապատերազմական աշխատանքի մասին: Ամբողջ աշ-


*խարհում բանվոր դասակարգի և աշխատավորների շարժման աճումն իմպերիալիստական պատերազմի պատրաստության դեմ, ԽՍՀՄ և չինական հեղափոխության պաշտպանության համար:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—

Կոմիտեերնի 6-րդ կոնգրեսի թեզիսները, իմպերիալիստական պատերազմի դեմ պայքարի միջոցների մասին:



... ՀՐԱՉԻՔ ԳՆԴԻ 4-ԲԴՎԱՇՏԻ 1-ԻՆ ԳԱՍՏԻՔ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՔԱՆ  
 ՊԱՐԱՊՈՒՆՔԻՆԵՐԻ ՀԱՃԱՆԵԼԻՈՒՓՅԱՆ ՈՒ ՅՈՒՐԱՅՄԱՆ ՀԱՇՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ  
 Խմբակալար 1-ին դասակ կրամատար Իվանով —




Միջանակ համար	Յուրացումն ու հաճախելությունը										Գրասիր աշխատ		Գաղտնիքի գնահատական					
	1	1	1	1	2	2	2	2	2	2	23/ XII	3	16/ XII	26/ XII	6/ I	10/ I	7/ III	
	1/ XII	3/ XII	6/ XII	7/ XII	9/ XII	11/ XII	13/ XII	16/ XII	17/ XII	19/ XII	21/ XII	23/ XII	2/ XII	16/ XII	26/ XII	6/ I	10/ I	7/ III
1 Արամով Գ.				լավ				զեր			լավ			լավ	լավ	լավ	լավ	լավ
2 Պետրով Ն.				լավ				լավ			լավ			լավ	լավ	լավ	լավ	լավ
3 Ստեփան Ա.				լավ				լավ			լավ			լավ	լավ	լավ	լավ	լավ
4 Նաումով Ի.				լավ				լավ			լավ			լավ	լավ	լավ	լավ	լավ
5 Պրոխորով Ի.				լավ				լավ			լավ			լավ	լավ	լավ	լավ	լավ
6 Պետրով Գ.				լավ				լավ			լավ			լավ	լավ	լավ	լավ	լավ


Բացարձակում ձեռք վիճակ առնելով: —

«Յուրացումն ու հաճախելությունը» ցանցում վերին սյունակում գրվում է թե՛ հաճախելության համարը, ինչպես նաև պարտավորվածների ամսաթիվը: Յուրացման նշաններն արվում են չորս աստիճանով՝ զեր. (զերադանոց), լավ, բավ (բավարար) և լավ: Գրավոր աշխատանքների զննչատականը նշվում է նույն կարգով, իսկ ըստ էության ծանոթությունները արվում են տետրերի տեղում: — Հաճախելությունը նշվում է իրան բացառությամբ (—) նշանով:











« Ազգային գրադարան »



NL0187425



ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

40



**ПРОГРАММА**

**Политзанятий с красноармейцами**

**II**

**Организационно-методические  
указания**

**Госиздат ССР Армении, Эривань, 1933**